

Ա. ՇՈՒԲԻՆ ՅԵՎ Կ. ԳՈՐԲՈՒՅՈՒԲՈՎ,

ԽՍՀՄ

ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ
ՆԱՎԱՏՈՐՄԸ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1939

31 JAN 2018

ՊՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒՔ

Ա. ՇՈՒԲԻՆ ՅԵՎ, Կ. ԴՈՒՐՈՒՅՈՒԲՈՎ,

ԽՍՀՄ

ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

ՊԵՏԶՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

1/2

А. ШУБИН И К. ДОБРОЛЮБОВ
ВОЕННО-МОРСКОЙ
ФЛОТ СССР

Аргмгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄՀՍԳ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Քարգմանիչ Հ. Հարարյան
Խմբագիր Անդ. Ղազարյան
Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեյան
Կոնսրուկտոր սրբագրիչ Լ. Արսվյան



11-287690/39

Գլավխտի լրագոր № 4—2497 հրատ. № 726,
Պատվեր № 174, տիրաժ 5000
Քղթի չափսը 84×110/16 (32.550 տպ. նիշ 1 տպ.
մամուլում) 3 տպ. մամուլ 1 1/2 թերթ թուղթ.
Հանձնված է արտադրության 27/VIII 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 19/XI 1939 թ.
Գինը 30 Կ.

Պատկերատեխնիկական գրականության հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլահյեբեդյան № 65

Պորհրդային կառավարության վորոշմամբ հուլիսի 24-ը
հայտարարված է ԽՍՀՄ Ռազմա-Մովային Նավատորմի որ:

Պորհրդային Ժողովուրդը Ռազմա-Մովային Նավատորմի
առաջին որը դիմավորում է այն ժամանակաշրջանում, յերբ
յերկրորդ հնգամյա սլրանի հաղթական իրազորման և սո-
ցիալիզմի ձեռք բերված հաջողութունների հիման վրա
ԽՍՀՄ-ը յերբորդ հնգամյակում մտել է զարգացման նոր
չրջանը, անդասակարգ սոցիալիստական հասարակության
կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կո-
մունիզմին անցնելու չրջանը: Ընկեր Ստալինի և կուսակցու-
թյան XVIII համագումարի կողմից առաջադրված պատմա-
կան այդ մեծ խնդիրը մեր յերկրի աշխատավորները լուծում
են թշնամական կապիտալիստական չրջապատման պայման-
ներում:

Միջազգային իրադրութունն ավելի ու ավելի լարված
է դառնում: Վերջին տարիների ընթացքում նշանակելի փո-
փոխութուններ կատարվեցին կապիտալիստական աշխար-
հում, ԽՍՀՄ-ի արտաքին ու ներքին դրության մեջ: Կապի-
տալիստական յերկրները լուրջ ցնցումներ են ապրում ինչ-
պես եկոնոմիկայի բնազավառում, այնպես և քաղաքակա-
նության բնազավառում: 1937 թ. յերկրորդ կեսից կապի-
տալիստական յերկրներում սկսվեց տնտեսական նոր ճգնա-
ժամ:

Վերսալյան և այլ պայմանադրերի հիման վրա հաղթող
պետութունների, գլխավորապես Անգլիայի, Ֆրանսիայի և
ԱՄՆ-ի՝ յերկրների միջև ստեղծած այսպես կոչված խաղաղ
հարաբերութունների ռեժիմը արմատապես ավերել են Ֆա-
շիստական ագրեսորները՝ Գերմանիան, Իտալիան, Յու-
գոսլան:

«Նոր իմպերիալիստական պատերազմը դարձավ փաստ»
(Ստալին):

Այսպես կոչված կապիտալիստական դեմոկրատական պետութունների կողմից ազրեստրներին սխտեմատիկ զինուաներ անելու քաղաքականութունը, նրանց հրաժարումը կոլեկտիվ անվտանգության քաղաքականութունից—ե՛լ ավելի վտտթարացրին միջազգային դրությունը:

Այդ տարիների ընթացքում Սորհրդային Միությունը վերջնականապես ամրապնդեց սոցիալիզմի տնտեսական ու քաղաքական դիրքերը:

«Սորհրդային Միության համար, ընդհակառակը, այդ տարիները յեղել են նրա աճման ու ծաղկման տարիներ, նրա տնտեսական և կուլտուրական հետագա վերելքի տարիներ, նրա քաղաքական ու ուղմական հզորության հետագա աճման տարիներ, ամբողջ աշխարհում խաղաղությունը պահպանելու համար նրա մղած պայքարի տարիներ» (Ստալին):

Հաղթանակած սոցիալիզմի յերկիրն աշխարհի բոլոր յերկրներից ամենից խաղաղասերն է: Սորհրդային կառավարության արտաքին քաղաքականությունը խաղաղության հետևողական քաղաքականություն է և պայքար է ազրեստրայի դեմ վոչ-աղրեսիվ տերությունների հուսալի ու եֆեկտիվ պաշտպանական Ֆրոնտ ստեղծելու համար:

ՍՍՀՄ չըջապատված է թշնամական կապիտալիստական յերկրներով և այդ պատճառով գտնվում է ռազմական հարձակման մշտական սպառնալիքի տակ:

Յապոնական ռազմամոլների պրովոկացիան 1938 թ. Սաան լճի մոտ և յապոնական զորքերի անընդատ հարձակումները մեր բարեկամ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության տերիտորիայի վրա—դրա փայլուն ապացույցն են:

Սորհրդային Ժողովրդի զինված ուժերը ալել են և այսուհետև ել կործանարար հակահարված կտան խորհրդային սահմանների անձեռնմխելիությունը խախտելու ամեն տեսակի փորձերին: Սորհրդային Միության Ժողովուրդները խաղաղության համար մղած պայքարում առաջվա պես և ամենից առաջ հենվում են միայն իրենց վրա:

«Իր արտաքին քաղաքականության մեջ Սորհրդային Միությունը հենվում է.

1. Իր տնտեսական, քաղաքական և կուլտուրական աճող հզորության վրա:

2. Մեր խորհրդային հասարակության բարոյական-քաղաքական միասնության վրա.

3. Մեր յերկրի Ժողովուրդների բարեկամության վրա.

4. Իր կարմիր Բանակի և Ռազմա-Մովային կարմիր Նավատորմի վրա.

5. Իր խաղաղության քաղաքականության վրա.

6. Բոլոր յերկրների աշխատավորների բարոյական աջակցության վրա, վորոնք խիստ շահագրգռված են խաղաղությունը պահպանելու:

7. Այն յերկրների խոհեմության վրա, վորոնք այս կամ այն պատճառով շահագրգռված չեն խաղաղությունը խախտելու» (Ստալին):

XVIII համազումարում տված պատմական գեկուցման մեջ ընկեր Ստալինը մատնանշեց մեր հետագա զարգացման ուղիները դեպի առաջ, դեպի կոմունիզմ և հարստացրեց կապիտալիստական չըջապատման պայմանների սոցիալիստական պետության մասին մարքս-լենինյան ուսմունքը:

Սոցիալիստական պետության ու նրա զինված հենարանի—կարմիր Բանակի, կարմիր Նավատորմի—ամեն կերպ ամրապնդումը առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր է:

Մեր յերկրում վերջնականապես լիկվիդացիայի յեն յենթարկված շահագործող դասակարգերի մնացորդները: Բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան համախմբվել են աշխատանքային մի ընդհանուր Ֆրոնտի մեջ, ամրապնդվել է խորհրդային հասարակության բարոյական-քաղաքական միասնությունը, ամրապնդվել է մեր յերկրի Ժողովուրդների բարեկամությունը, և կիրառված է քաղաքական կյանքի լիակատար դեմոկրատացումը՝ Ստալինյան Առհմանադրության հիման վրա:

Մենք ունենք «յերկրում իշխանության այնպիտի ամրություն, վորին կարող եր նախանձել աշխարհի ուղածղ կառավարությունը» (Ստալին):

ՍՍՀՄ-ի զինված ուժերը—կարմիր Բանակը, Ռազմա-Մովային կարմիր Նավատորմը—մեր սիրելի խորհրդային

Հայրենիքի սահմանների վրա կանգնած անխորտակելի ուժն են և պատրաստ են ամեն մի րոպե «կրկնակի հարվածով պատասխանելու պատերազմի հրձիգների հարվածին» (Մտալիճ) :

Սուրհրդային ամբողջ ժողովուրդը, սոցիալիստական յերկրի տասնյակ-միլիոնավոր հայրենասերներ հիշում և կյանքում տնց են կացնում ընկեր Մտալիճի ցուցումը՝

«Հարկավոր է ամեն կերպ ուժեղացնել ու ամրացնել մեր կարմիր Բանակը, կարմիր Նավատորմը, կարմիր ավիացիան, Պաշտ-Ասլիաքիմը» :

Ռազմա-Մովային Նավատորմի—խորհրդային ժողովրդի հարազատ զավակի—որը քաղաքական կարևորագույն ձեռնարկում է, վոր անց է կացվում աշխատավորության լայն մասաները ԽՍՀՄ-ի Բանվորա-Պյուղացիական Ռազմա-Մովային Նավատորմի շինարարության խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու նպատակով :

ԽՍՀՄ-ը ծովային հզոր պետություն է : ԽՍՀՄ-ի 65 հազ. կիլոմետր պետական սահմաններից հաշվվում է միայն 18 հազ. կմ, ցամաքային և 47 հազ. կմ. ծովային սահմաններ. 14 ծով և յերկու ովկիանոս վողողում են Սուրհրդային Միություն արերը : Մեր յերկրի եքսպորտի մոտ 82%-ը և իմպորտի 78%-ը գնում է ծովային ճանապարհներով : Նրանք հաղորդակցության և տնտեսական կապերի կարևորագույն միջոցներ են մեր յերկրի ներսում և մյուս յերկրների հետ : Ծովային և ովկիանոսային տարածությունները վիթխարի նշանակություն ունեն ԽՍՀՄ-ի ակտիվ պաշտպանության համար :

«Մենք պետք է հաշվի առնենք այն, վոր մեր յերկիրը մեծ է, վոր նա հսկայական տարածության վրա վողողվում է ծովերով, և այդ մեզ միշտ հիշեցնում է այն մասին, վոր մեզանում նավատորմը պետք է լինի ամրակուռ, ուժեղ : Այդ մասին կապիտալիստական տերությունները մեզ հիշեցնում են հենց նրանով, վոր վերջին տարիներս նրանք ռազմա-ծովային վիթխարի շինարարություն են ծավալել» (Մոլոտով) :

Ռտարեերկրյա մամուլում հրապարակված տվյալների համաձայն, կապիտալիստական յերկրներում 1939 թ. կա-

ուղցման մեջ են գտնվում և հիմնադրություն են նշված՝ Անգլիայում—580 հազ. տոնն, Ամերիկայում—425 հազ. տոնն, Յատոնիայում—409 հազ. տոնն, Գերմանիայում—222 հազ. տոնն, Ֆրանսիայում—148 հազ. տոնն, Իտալիայում—130 հազ. տոնն ընդհանուր ջրատարողությամբ մարտանավեր :

Կառուցվող նավատորմի կեսից ավելին—զծանավեր են, իսկ այնուհետև՝ հաճանավեր : Կապիտալիստական խոշորագույն յերկրներից Անգլիան կառուցում է 7 զծանավ, ԱՄՆ-ը, Յատոնիան, Ֆրանսիան, Իտալիան ու Գերմանիան յուրաքանչյուրը կառուցում են 4-ական զծանավեր : 1938 թ. սկզբին Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, Յատոնիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան միասին կառուցման մեջ ունեյին 29 զծանավ, 23 սավանակակիր և հիդրոսավանակակիր նավեր, 4 հաճանավ, 39 թեթև հաճանավ, 158 լիդեր, եսկազրային ականակիր ու ականակիր և 109 սուզանավ :

1928-ից մինչև 1938 թ. մարտանավերի (զծանավերի, հաճանավերի, եսկազրային ականակիրների, սուզանավերի) թիվը Գերմանիայի և Իտալիայի նավատորմներում աճեց՝ Իտալիայում—143-ից մինչև 222, Գերմանիայում—ավելի քան յերկու անգամ :

Հաշվի առնելով միջազգային իրադրությունը և կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող ռազմա-ծովային սպառազինումների վազքը, հաշվի առնելով մեր ցամաքային ու ծովային ճանապարհների սահմաններին աճող սպանալիքը, ԽՍՀՄ-ն անհրաժեշտ հետևություններ արեց և ձեռնարկեց ծովային ու ովկիանոսային հզոր նավատորմի շինարարությունը :

Մովային ու ովկիանոսային հզոր նավատորմը մեզ կողմնի կործանելու մեր թշնամիներին և պատերազմի ժամանակ ցրկելու հակառակորդին նրա ծովային հաղորդակցություններից : Առանց ուժեղ նավատորմի չի կարելի պաշտպանել սեփական հաղորդակցության ճանապարհները : Նավատորմը վիթխարի նշանակություն ունի սոցիալիստական պետության ծովային սահմանները հակառակորդի ներխուժումից պաշտպանելու համար և պատերազմը հակառակորդի տերիտորիան տեղափոխելու համար :

Մեր նախատորմը մարտական հարստագուշն տրադիցիա-
ներ ունի: Դեռևս Պյոտր I-ի ժամանակ ուսու ծովազնացները
գլխովին ջարդեցին շվեդների ալեյի ուժեղ նավատորմը,
իսկ հետագայի մարտերում ջրասույզ արին գերմանական ու
յապոնական շատ տասնյակ նավեր:

Սրանից 225 տարի առաջ Գանգուտի մոտ տեղի ունե-
ցած ճակատամարտի ժամանակ ուսու ծովազնացները շրջա-
պատեցին և դերի վերցրին շվեդների՝ 10 նավերից կազմված
ծովային եսկադրան՝ 116 թնագոնթի, անձնակազմի և կոնտր-
ադմիրալ Երենչիլդի հետ միասին: Ռուս ծովազնացների
տարած հաղթութունը Գանգուտի մոտ, ինչպես և շվեդնե-
րի ջախջախումը Պոլտավայի տակ, — հաստատեց Ռուսաստա-
նի յեկըր դեպի ծով և ամրապնդեց ծովային տերության
նրա որինական կոչումը:

Այդ ժամանակից սկսած ուսու ծովազնացները մարտե-
րում շատ անգամ են ապացուցել իրենց անսահման քաջու-
թյունն ու հերոսությունը:

Ռուս ժողովրդից աճել են ամբողջ աշխարհին հայտնի
ծովազնացներ Սեդովը, Դավիդովը, Պոյարկովը և ուրիշ.,
վորոնք մեծագուշն ավանդներ են մտցրել համաշխարհային
գիտության մեջ:

Ռուս ռազմական ծովազնաց Մակարովը աշխարհին
ավելի նավերի չընկրմովելու թևորիան, ստեղծեց սառցահաս
նավի նոր տիպը:

Ռուս ծովազնաց Պոպովը հնարեց ռադիոն...

Ծովը և ծովազնացությունը սիրող ուսու մեծ ժողովուր-
դը կուտակեց գիտական ու մարտական հարստագուշն փորձ,
վորը շնորհակալությամբ ուսումնասիրում է մեր խորհրդա-
յին ծաղկող յերիտասարդությունը:

ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նա-
վատորմը, ուսումնասիրելով հին ուսուական նավատորմի
լավագուշն մարդկանց մարտական տրադիցիաները, սիրա-
գործությունները, պատրաստ է պատվով կատարելու իր
հիմնական խնդիրը—ԽՍՀՄ ծովային սահմանների ակտիվ
պաշտպանությունը: Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բա-
նակի ու ստալինյան ավիացիայի հետ միասին Ռազմա-Ծո-
վային Կարմիր Նավատորմն իր մարտական գործողություն-

ները կհասցնի հակառակորդի կատարյալ վաճառմանը,
գործելով թշնամու դասավորության ամբողջ խորությամբ,
ընդհուպ մինչև հակառակորդի ավերն ու բազաները և իր
գործողություններով կնպաստի պատերազմը թշնամու տե-
րիտորիան տեղափոխելու:

Կարմիր Նավատորմը կոժանդակի Կարմիր Բանակի՝ իր
թևով ծովայի դուրս յեկող զորամասերին, նրանց կալաչո-
պանի կրակով, դեսանտների ափհանումով և կապահովի
թևը հակառակորդի հարձակումից: Հակառակորդի ռազմա-
ծովային ուժերի դեմ ծովում ակտիվ կերպով պայքարելու
համար Խորհրդային Միությանը հարկավոր է ծովային ու-
ժերի բոլոր տեսակներից (նավեր, ծովային ավիացիա ու
առափնյա պաշտպանություն) և նավերի բոլոր կարգերից
կազմված ահարկու նավատորմ:

Ժամանակակից պատերազմում նավատորմի դերը պա-
տասխանատու ու բազմապիսի յե: Թշնամական նավատորմ-
ների հետ բաղխվելիս վիթխարի դեր կխաղա մարտական
հզոր տեխնիկան: Սակայն վճռական դերն այնուամենայնիվ
մարդկանց է մնում: Հաղթող կհանդիսանա այն կողմը,
վորտեղ կա վոչ միայն ուժեղ ու ժամանակակից տեխնիկա,
այլև վորտեղ մարդիկ ավելի լավ են տիրապետել տեխնի-
կային, վորտեղ նրանք ավելի կարգապահ ու ավելի տոկուն
են, վորտեղ ավելի լավ ու ավելի հմուտ է մարտական դե-
կավարությունը, հրամանատարական կազմերը և գլխավո-
րը—վորտեղ մարտիկներն ու հրամանատարները միավորված
են մի ընդհանուր շահադրդությամբ, գիտեն, թե ինչի հա-
մար են իրենք կռվում, և պատրաստ են դնալու դեպի նո-
րանոր սխրագործություններ:

Այդպիսի մարտիկներ ու հրամանատարներ ունեցող մի-
ակ նավատորմը աշխարհում հանդիսանում է Բանվորա-
Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմը, վորը պայ-
քարում է Լենինի—Ստալինի մեծ դործի համար, պատրաստ
է կատարելու կուսակցության ու կառավարության յուրա-
քանչյուր առաջադրանքը:

Կարմիր Նավատորմի թիկունքումն է խորհրդային ժողո-
վրդի բարոյա-քաղաքական անխորտակելի միասնությունը,
ժողովրդի, վորն իր պատմությամբ ցույց տվեց, վոր նա

Մեր նախատորմը մարտական հարստագուշն տրադիցիաներ ունի: Դեռևս Պյոտր I-ի ժամանակ ռուս ծովազնացիները գլխավոր ջարդեցին չվեզներին ավելի ուժեղ նախատորմը, իսկ հետագայի մարտերում ջրատույզ արին զերմանական ու յապոնական շատ տասնյակ նավեր:

Մրանից 225 տարի առաջ Գանգուտի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ ռուս ծովազնացիները չընկալապետեցին և զերի վերցրին չվեզների՝ 10 նավերից հողմված ծովային եսկադրան՝ 116 թնագունթի, անձնակազմի և կոնտրադմիրալ Երենչիրլիի հետ միասին: Ռուս ծովազնացիների տարած հաղթութունը Գանգուտի մոտ, ինչպես և չվեզների ջախջախումը Պոյասովայի տակ, — հաստատեց Ռուսաստանի յեղբը զեպի ծով և ամբողջնեց ծովային տերութւյան նրա որինական կոչումը:

Այդ ժամանակից սկսած ռուս ծովազնացիները մարտերում շատ անգամ են ապացուցել իրենց անսահման քաջությունն ու հերոսությունը:

Ռուս ժողովրդից աճել են ամբողջ աշխարհին հայտնի ծովազնացիներ Սեդովը, Դավիդովը, Պոյարկովը և ուրիշ, վորոնք մեծագուշն ավանդներ են մտցրել համաշխարհային զիտութւյան մեջ:

Ռուս ռազմական ծովազնացի Մակարովը աշխարհին ավեց նապերի չընկղմվելու թերութան, ստեղծեց սառցահատ նավի նոր տիպը:

Ռուս ծովազնացի Պոպովը հնարեց ռադիոն...

Ծովը և ծովազնացությունը սիրող ռուս մեծ ժողովուրդը կուտակեց զիտական ու մարտական հարստագուշն վործ, վորը չնորհակալութւյամբ ուսումնասիրում է մեր խորհրդային ծաղկող յերիտասարդությունը:

ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նախատորմը, ուսումնասիրելով հին ռուսական նախատորմի լավագուշն մարդկանց մարտական տրադիցիաները, սխրագործությունները, պատրաստ է պատվով կատարելու իր հիմնական խնդիրը—ԽՍՀՄ ծովային սահմանների ակտիվ պաշտպանությունը: Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ու ստալինյան ավիացիայի հետ միասին Ռազմա-Ծովային Կարմիր Նախատորմն իր մարտական գործողություն-

ները կհասցնի հակառակորդի կատարյալ վոչնչացմանը, գործելով թշնամու դասավորութւյան ամբողջ խորութւյամբ, ընդհուպ մինչև հակառակորդի աիերն ու բազաները և իր գործողութւյուններով կնպաստի պատերազմը թշնամու տերիտորիան տեղափոխելու:

Կարմիր Նախատորմը կոժանդակի Կարմիր Բանակի՝ իր թևով ծովով դուրս յեկող գորամասերին, նրանց կապապանի կրակով, դեսանտների աիհանումով և կապահովի թևը հակառակորդի հարձակումից: Հակառակորդի ռազմածովային ուժերի դեմ ծովում ակտիվ կերպով պայքարելու համար Խորհրդային Միութւյանը հարկավոր է ծովային ուժերի բոլոր տեսակներից (նավեր, ծովային ավիացիա ու առափնյա պաշտպանություն) և նավերի բոլոր կարգերից կազմված ահարկու նախատորմ:

Ժամանակակից պատերազմում նախատորմի դերը պատասխանատու ու բազմապիսի յե: Թշնամական նախատորմների հետ բաղխվելիս վիթխարի դեր կխաղա մարտական հզոր տեխնիկան: Սակայն վճռական դերն այնուամենայնիվ մարդկանց է մնում: Հաղթող կհանդիսանա այն կողմը, վորտեղ կա վոչ միայն ուժեղ ու ժամանակակից տեխնիկա, այլև վորտեղ մարդիկ ավելի լավ են տիրապետել տեխնիկային, վորտեղ նրանք ավելի կարգապահ ու ավելի տոկուն են, վորտեղ ավելի լավ ու ավելի հմուտ է մարտական դեկավարությունը, հրամանատարական կազմերը և գլխավորը—վորտեղ մարտիկներն ու հրամանատարները միավորված են մի ընդհանուր շահագրգռութւյամբ, զիտեն, թե ինչի համար են իրենք կռվում, և պատրաստ են զնալու զեպի նորանոր սխրագործություններ:

Այդպիսի մարտիկներ ու հրամանատարներ ունեցող միակ նախատորմը աշխարհում հանդիսանում է Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նախատորմը, վորը պայքարում է Լենինի—Ստալինի մեծ գործի համար, պատրաստ է կատարելու կուսակցութւյան ու կառավարութւյան յուրաքանչյուր առաջադրանքը:

Կարմիր Նախատորմի թիկունքումն է խորհրդային ժողովրդի բարոյա-քաղաքական անխորտակելի միասնությունը, ժողովրդի, վորն իր պատմութւյամբ ցույց տվեց, վոր նա

գիտե վոչ միայն կովել, այլև գիտե հաղթել: «Մեր ժողովուրդը սիրում է խաղաղությունը, գնահատում է նրա մեծ բարեքները և պայքարում է հանուն խաղաղության՝ ամբողջ աշխարհում: Բայց նա գիտե նաև կովել: Յեվ վո՛չ միայն գիտե, այլև սիրում է կովել» (Վարդիլով):

ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԾՆՈՒՆԴԸ ՅԵՎ ՄԱՍՆԱԿ-ՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Կարմիր Նավատորմը ծնունդ է առել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից և ստեղծված է բոլշևիկների կուսակցության կողմից՝ իրագործելու համար Կարմիր Բանակի հետ ընդհանուր խնդիրները՝ սոցիալիստական յերկրի ռազմական պաշտպանությունը դրսից կատարվող հարձակումից, ապահովելու համար «ամբողջ իշխանությունը լիովին աշխատավորական մասսաների համար և շահագործողների իշխանությունը վերականգնելու ամեն մի հնարավորություն վերացումը» (Լենին):

Դեռ մինչ հեղափոխությունը բոլշևիկների կուսակցությունը Լենինի և Ստալինի ղեկավարությամբ սխտեմատիկ աշխատանք էր տանում հին նավատորմի նավաստիների մեջ, միջուկ նախապատրաստելով հեղափոխական նավատորմի ստեղծման համար: Լենինը մեծ նշանակություն էր տալիս նավաստիների ու զինվորների մեջ տարվող հեղափոխական աշխատանքին. «Բանակը քաղաքականություն մեջ չքաշելու գա բուրժուազիայի և ցարիզմի կեղծավոր ծառաների լուսուցն է, վորոնք իրականում բանակին շարունակ ունակցին քաղաքականության մեջ են քաշել...»¹:

Հարկավոր է զինվորներին ու նավաստիներին պարզարանել, ասում էր Լենինը, վոր չի կարելի մի կողմ կանգնել ազատության համար մղվող համաժողովրդական պայքարից:

Յեվ բանակում ու նավատորմում բոլշևիկների տարած աշխատանքն իր պտուղներն էր տալիս:

¹ Լենին, հատ. VIII, էջ 390: Հայ. հրատ., էջ 504:

1905 թ. ապստամբություն բռնկվեց Կրոնշտադտում և Սևծովյան նավատորմի նավաստիներին մեջ: 1906 թ. տաս- ուր՝ ապստամբություն Միկաբորգում: «Պոստոմիկին» գրա- հանալի վրա բռնկված նշանավոր ապստամբությունը Լենին- նը գնահատում էր վորպես հեղափոխական բանակի միջուկի ստեղծման սկիզբ: Նավատորմում ստեղծված կուսակցական կազմակերպութիւնների միջոցով բոլշևիկները կուսակցու- թյունը իմպերիալիստական պատերազմի տարիներին և Փե- տրովարյան հեղափոխութիւնից հետո ել ավելի մեծ հաս- տատակամբությամբ և ուժով պայքարում էր նավատորմի նավաստիների հեղափոխական դաստիարակության համար, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատե- րազմի վերածելու համար:

Ճակատում և թիկունքում բոլշևիկները Լենինի ու Ստալինի ղեկավարութեամբ անդուլ կերպով աշխատում է- յին զինվորներին ու նավաստիներին կազմակերպելու վրա: Այդ աշխատանքը հասցրեց այն բանին, վոր Բալթիական նա- վատորմի նավաստիները հեղափոխության առաջին շարքե- րումն էլին: Արդեն 1917 թ. ապրիլի մոտերքը Կրոնշտադտի ու Հելսինգֆորսի կուսակցական կազմակերպութիւններում կար Յ-հազարական բոլշևիկ, 1917 թ. ամառվան մոտ Բալ- թիական վողջ նավատորմը, վորում հաշվվում էր 120 հազ. նավորդ, Ռուսաստանի ամբողջ նավատորմի անձնակազմի մոտ 70%-ը բոլշևիկների կողմն էր: 1917 թ. սեպտեմբե- րի վերջին Բալթիական նավատորմի նավորդները Լենինի- Ստալինի կուսակցութեանն իրենց լիակատար պատրաստա- կամութեանը հայտնեցին՝ հանուն խորհուրդների իշխանու- թյան զինված յեղույթ ունենալու համար:

Բալթիական նավատորմը միահամուռ կերպով հանդես յեկավ որուսական բուրժուազիայի և նրա կառավարութեան խարդախ, դավաճանական պլանների դեմ, վորոնք վորձում էին Պետրոգրադը հանձնել գերմանացիներին, զինաթափել նավատորմը և գերմանական կոչիկներով խեղդել հեղափո- խութիւնը: Բուրժուազիայի պլանները ձախողվեցին: 1917 թ.վի հոկտեմբերին Բալթիական նավատորմի հեղափոխական նավաստիները, հակառակ սպանների դիմադրութեան, մարտի

մեջ մտան գերմանական նավատորմի հետ և, չնայած հա- կաակիրորդի մարտական միավորների բազմապատիկ գերա- զանցութեանը, լուրջ վնաս հասցրին գերմանական նավա- տորմին:

Բոլշևիկները աշխատանքը նախապատրաստեց նավորդնե- րի ակտիվ մասնակցութեանը Հոկտեմբերյան զինված ապրա- տամբութեանը: Լենինի հաշիվներով ապստամբութեան նա- խապատրաստման ուղղութեամբ նավատորմը հանդես էր գալիս վորպես հեղափոխութեան գլխավոր ուժերից մեկը: Մշակելով զինված ապստամբութեան պլանը, Լենինը զրուս- տեր:

«Համակցել մեր յերեք գլխավոր ուժերը՝ նավատորմը, բանվորներին և զինվորական մասերն այնպես, վորպեսզի անպայմանորեն դրախվեն և ինչ գնով ել լիկի պահվեն ա) հե- ոախոսը, բ) հեռագիրը, գ) յերկաթուղային կայարանները, զ) կամուրջներն առաջին հերթին»:

Ամենավնասակառ տարրերի (մեր «հարվածայիններից» և բանվոր յերիտաարդուքյունից, ինչպես և լավագույն նա- վաստիներից) փոքր ջոկատներ կազմել բոլոր կարևորա- գույն կետերը նրանցով դրախվելու և ամենուրեք, բոլոր կա- րևորագույն գործողութիւնների մեջ նրանց մասնակից դարձնելու համար...»¹:

Լենինը զրուստ էր, վոր ապստամբութեան հաջողութեան- նը «կարող է և պետք է վորոշի Պիտերը, Մոսկվան, Հել- սինգֆորսը, Կրոնշտադտը, Վիբորգը, Ռիմելը»:

Լենինի և Ստալինի ղեկավարութեամբ Պետրոգրադի բանվոր դասակարգի հետ միասին նավորդներն անմիջական մասնակցութեան ունեցան Հոկտեմբերյան զինված ապստա- մբութեան մեջ: Բալթիական նավատորմը հանուն Հոկտեմբե- րյան հեղափոխութեան հանդես յեկավ Բալթիական 2-րդ նավատորմային եկիպաժի, գլխարդիական եկիպաժի, մեքե- նական գալորոցի, ականա-վարժական ջոկատի կոմանդայի, Հելսինգֆորսից յեկած նավորդների համահավաք ջոկատի և 8 մարտանավերի կազմով, վորոնց մեջ էր նաև «Ավորա» համանավը (ընդամենը մոտ 10 հազ. նավորդ):

¹ Ленин, т. XXI, стр. 320.

«Ալբրորա» հաճանալը Չմեռային պալատի դեմ ուղղած իր թնդանութիւնքի վերաբերելով հոկտեմբերի 25-ին հայտարարեց նոր երայի—մեծ սոցիալիստական հեղափոխութեան երայի սկսվելը¹ :

1918 թ. փետրվարի 12-ին Լենինն ստորագրեց Հին նա-վատորմի ցրման և Բանվորա-դյուրացիական սոցիալիստա-կան Կարմիր նավատորմ ստեղծելու մասին ղեկընդորդը: Կար-միր նավատորմի մարտական հեղափոխական տրադիցիանե-րը նրա գոյութեան հենց սկզբից հանդիսանում են անաս-ման նվիրվածութունը Լենինի—Ստալինի դործին, սերը դե-պի սոցիալիստական հայրենիքը, անվեհերութունն ու անո-գոք պայքարը ժողովրդի թշնամիների դեմ: Կարմիր նավա-տորմը ծնվեց ու աճեց Կարմիր Բանակի հետ միասին՝ քա-ղաքացիական պատերազմի դաժան փորձութունների մեջ, ինտերվենտների դեմ ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում մղած մարտերում:

Հեղափոխութեան առաջին իսկ օրերին բոլշևիկների կու-սակցութունը Լենինի և Ստալինի ղեկավարութեամբ պայ-քար ծավալեց հաշտութեան համար: Անգլիայի ու Ֆրանսի-այի՝ հաշտութեան մասին բանակցութուններից հրաժարվե-լուց հետո Սորհրդային կառավարութունը հաշտութեան մասին բանակցութուններ սկսեց Գերմանիայի ու Ավստրիա-յի հետ: Բոլոր հակահեղափոխականները կատաղի ազդեա-ցիա սկսեցին հաշտութուն կնքելու դեմ: Նրանք ձգտում էին վիժեցնել բանակցութունները, դերմանացիներին հար-ձակման նենգադրել և հարվածի տակ դնել տակավին չամ-բարնդված խորհրդային իշխանութունը:

Հակահեղափոխականներին հետ միասին, ի չափ դերմա-նական իմպերիալիզմի, գաղտնի պալատքութուն սարքելով ընդդեմ Սորհրդային կառավարութեան, ընդդեմ կուսակցու-թեան, ընդդեմ Լենինի և Ստալինի, հանդես յեկան տրոց-կիստներն ու բուխարինականները, պրովոկացիոն կերպով պահանջելով շարունակել պատերազմը: Միաժամանակ տրոց-

կիստական-բուխարինական և կապիտալիստական յերկրնե-րի հետախուզութունների այլ դործակալներ հանդես յեկան ընդդեմ կանոնավոր Կարմիր Բանակ ու Կարմիր նավատորմ ստեղծելու, ընդդեմ հեղափոխական ռազմական ղեկացիալի-նայի ամբաստնման: Ողտադործելով հաշտութեան կնքումը կասեցնող տրոցկիստների ու բուխարինականների պրովոկա-ցիոն քաղաքականութունը, դերմանական գործերը հարձակ-ման անցան:

Բոլշևիկների կուսակցութունը, խորտակելով հեղափո-խութեան թշնամիների ղեկավարութունը, ստեղծեց Կարմիր նավատորմը, վորպես սոցիալիստական հեղափոխութեան նվաճումների հավատարիմ հենարան:

Ի պատասխան կուսակցութեան ու Սորհրդային կառա-վարութեան՝ «սոցիալիստական հայրենիքը վտանդի մեջ է» կանչին, բանվոր դասակարգն սկսեց ամբացնել բանակի ու նավատորմի գործառույթը: Կարճ ժամանակամիջոցում կու-սակցութեան ու բանվոր դասակարգի կամքով խորտակվեց հեղափոխութեան թշնամիների ղեկավարութունը: Փետրվա-րի 22-ին «Ռեսպուբլիկա» զժանապի ննձնակազմը, ի պատաս-խան դերմանական ինտերվենտներին հակահարված տալու համար բոլոր հեղափոխական ուժերը մորիլիդացիայի յեն-թարկելու մասին կուսակցութեան արած կոչին, վորոչեց.

«1. Անմիջապես ընդհատել պահեստային դարձնելն ու արձակուրդ տալն առանց բացառութեան բոլորին:

2. Կանչել արդեն դնացածներին:

3. Կարճ ժամանակամիջոցում ամեն ինչ մարտական պատրաստութեան մեջ դնել, նախ Վրա հեղափոխական խիստ կարգ մտցնել:

Հասել է բաց կովում, վերջին վճռական կովում անի-ծյալ թշնամու հետ հաշիվ տեսնելու մոմենտը: Դեհ, հո չենք թույլ տա, ընկե՛ր նավաստիներ, հեղափոխութեանը մին-չև այժմ հավատարիմ վորդիներ, վոր միավորված և մեր ա-րյան ծայրով բուրժուազիան հաղթող հանդիսանա: Բոլո՛րս ի դե՛ն: Բոլո՛րս հեղափոխութեան կարմիր դրոշի տա՛կ»:

Այդ պատմական վորոչումը արտահայտում էր ամբողջ Բանվորա-Գյուղացիական Կարմիր նավատորմի կամքն ու ձգտումը: Քաջարի կարմիր նավորդները, հեղափոխական ու

¹ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցու-թեան պատմութուն: Համատու դասընթաց, էջ 199: Հայ. հրատ., էջ 280—281:

մարտական տրադեցիաներին հաջատարիմ, նավատորմի պատմության մեջ նմանը չունեցող գործերով պատասխանեցին Լենինի—Ստալինի կուսակցության կողմին:

1918 թ. մարտի 12-ին Բալթիական կարմիր Նավատորմի սկսեց աշխարհի նավատորմների պատմության մեջ յեզակի ստուցային արշավանքը: Համատարած սառույցով պատած Ֆիննական ծոցով, գերմանական ինտերվենտների ու Ֆիննահան սպիտակ-զվարդիականների ձեռքն ընկնելու սպառնալիքի տակ, Բալթիկի նավատիրները բոլշևիկներին ղեկավարությամբ Հելսինգֆորսից կրոնշտադտ բերին 211 նավ, պահպանելով գրանդ սոցիալիստական հայրենիքի համար:

Սև ծովում նավորդներն ուժ չունեցին անհապաղ հակահարված տալու հարձակվող ինտերվենտներին: Կարևորն այն էր, վոր նավերը գերմանացիների ու սպիտակների ձեռքը չընկնեյին: Այդ պատճառով 1918 թ. հունիսին սևծովայինները Լենինի ցուցումով նավերի մեծ մասը ջրատույզ արին Նովորոսիյսկի ուսյունում, իսկ իրենք գննքն ու ուղղամիթերը վերցնելով, անցան քաղաքացիական պատերազմի ֆրոնտները: Շատերը գնացին Վոլգա, վորտեղ ընկերներ Ստալինի ու Վորշիլովի ղեկավարությամբ մասնակցություն ունեցան Յարիցինի հերոսական պաշտպանության մեջ:

1918 թ. ոգոստոսին բալթիկցիները միջանի որվա ընթացքում ահանախակոցներ դրին Ֆիննական ծոցում, ինտերվենտների համար կտրելով դեպի Պետրոգրադ տանող ծովային մատույցները:

Զինվորական ծովազնացները կազմեցին բոլոր նավարկելի գետերի ու լճերի նավատորմիկների կազերը:

Վլադիմիր Իլյիչ Լենինը, Իոսիֆ Վլասարիտնովիչ Ստալինը անձամբ զբաղվում են նավատորմի ձևավորման ու ամրապնդման հարցերով, մեծ նշանակություն տալով նրան:

1919 թ. ոգոստոսի 28—29-ին Վլադիմիր Իլյիչ Լենինը Թագմա-Շովային Ուժերի Շտաբին յերկու գրություն է գրում: Առաջինում ասվում է.

«Ի՞նչ վիճակում է Վոլգա և Կասպից ծով սուզանավեր ուղարկելու հարցը:

Արդյո՞ք ճիշտ է, վոր միայն հին սուզանավերը կարելի չեն ուղարկել:

Քանի՞ հաս են դրանք:

Յե՞րբ է արված ուղարկման մասին կարգադրությունը: Ի՞նչ է ընդհանրապես արված»:

Յերկրորդ գրության մեջ Լենինը գրում է.

«Անհնար է սահմանափակել այդպիսի անորոշությամբ՝ «փնտռում ենք» (Քո գո՞ւյրը: Անհրաժեշտ է վաղն էն թ ներկայացնել ինձ, «փնտալոցներին» անուանե՛րք, քվա-կա՛նք, վորից նրանք փնտռում են և այլն):

«Պարզվում է ուղարկելու հնարավորությունը»—նույնպես անասելի անորոշ է:

Յե՞րբ և ո՞վ է կարգադրել «սարգել»: Յես խնդրում եմ վաղը (30/8) ինձ այդ հաղորդել ճիշտ, պաշտոնապես:

Վորովհետև սուզանավերի առաքման գործը հետաձգում չի հանդուրժում և վո՛չ մի րուպե՛¹:

Յարիցինի ֆրոնտում՝ Ստորախանի մոտ և Կասպից ծովում տիրող շափազանց ծանր դրության կապակցությամբ, վորտեղ իշխում էլին անգլիացիներն ու ուսս սպիտակ-զվարդիականները, ընկեր Ստալինը Լենինին գրում է.

«Թանգազին ընկեր Լենին:

Պայքար է հարավի և Կասպիայի համար: Այդ ամբողջ ուսյունը մեր ձեռքում պահելու համար (իսկ այն կարելի չէ մեր ձեռքում պահել) անհրաժեշտ է ունենալ թեթև տիպի միջանի ահանախիքներ և մի յերկու սուզանավ: Աղաչում եմ Ձեզ փշրել բոլոր խոչընդոտները և դրանով հեշտացնել—առաջ շարժել պահանջվածն անհապաղ ստանալու գործը: Բազուն, Թուրքեստանը, Հյուսիսային Կովկասը կլինեն (անպայման) մերը, յեթե անհապաղ բավարարվեն պահանջները: Մեր գործերը ֆրոնտում լավ են գնում: Ձեմ տարակուսում, վոր ավելի լավ կընթանան (կազակությունը վերջնականապես քայքայվում է): Սեղմում եմ իմ թանգազին ու սիրելի Իլյիչի ձեռքը: Ձեր Ստալին»:

¹ «Правда», 23 փետրվարի, 1938 թ.:

11-237699



Լենինը, ստանալով ընկեր Ստալինի նամակը, նրա մեջ ջնջեց անձամբ իրեն վերաբերող վերջին տողերը, նամակի տակ դրեց իր ստորագրութունը և նույն օրն իսկ ուղարկեց Պետրոգրադ, վորպես Ժողկոմխորհի դիրեկտիվ՝ շտապ կատարելու համար:

Այս փաստաթղթերը բնութագրում են այն նշանակալից իրադարձությունները, վոր քաղաքացիական պատերազմում նավատորմին տալիս էին հեղափոխութեան առաջնորդներ Լենինն ու Ստալինը, նրանց մշտական հոգացողութունը նավատորմի մասին:

Ընկեր Ստալինի նախաձեռնութեամբ 1918 թ. ստեղծվում է Վոլգայի նավատորմիչը: Լենինի և Ստալինի ցուցումներով Կասպից ծով են ուղարկվում ակամակիրներ: Այնտեղ են նետվում նաև չորս սուզանավեր: Ոգոստոսի 27-ին Վոլգայի նավատորմիչին միացան Բալթիական նավատորմի յերեք ակամակիրներ: Ենթահիվ այդ միջոցառումների Վոլգայի նավատորմիչը մեծ ոգնութուն ցույց տվեց Կարմիր Բանակի զորամասերին՝ Կոլչակի ջախջախման գործում: Իր մարտական գործողութուններով նա 1919 թ. պահպանեց յերկրորդ Կարմիր Բանակի թիկունքն ու թևը, խափանեց սպիտակ նավատորմիկի մուտքը Վյատկա գետը, ապահովեց յերկրորդ բանակի գետանցը, ղեկսնտ հանելով սպիտակների թիկունքում: Իրանով նավատորմիչը աջակցեց Կարմիր Բանակի հարձակմանը Կոլչակի վրա:

Բալթիական Կարմիր Նավատորմը վիթխարի դեր խաղաց նաև Յուզենիչի հարձակումից Պետրոգրադը պաշտպանելու մեջ, վորն սկսվեց արևելյան Փրոնտում տեղի ունեցած իժնական մարտերի ժամանակաշրջանում՝ 1919 թ. մայիսին: Ֆինլանդիայից-Սորհրդային Կարելիա չարավեց այսպես կոչված Ուրնեցկի կամավորական բանակը: Ֆիննական ծոցում սկսվեցին եստոնական ու անգլիական նավերի ուղեբացիաները: Նրանք գնդակոծեցին խորհրդային ափերը և գեսանտ հանեցին: Ստեղծվեց Պետրոգրադին սպասող անմիջական սպանալիչը: Թշնամին մոտենում էր քաղաքին: Պետրոգրադում նախապատրաստվում էր զինվորական դավադրութուն, վորի կազմակերպողն էր անգլիական հակա-

հետախուզութեան գործակալ Պոլ Դյուկսը: Լրտեսները մուտք գործեցին բանակի ու նավատորմի շտաբները: Հահահեղափոխութունը զլուխ էր բարձրացնում:

Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն, Վ. Ի. Լենինը Պետրոգրադի Փրոնտ են ուղարկում ընկեր Ստալինին:

«Այնտեղ, վորտեղ մի ամբողջ շարք պատճառների շնորհիվ կարմիր բանակները ճարձատում էին, վորտեղ հակահեղափոխական ուժերը, ծավալելով իրենց հաջողութունները, սպառնում էին խորհրդային իշխանութեան գոյութեանն իսկ, վորտեղ չիտթութունն ու խուճապը կարող էին ուղած դրոպելին փոխարկվել անճարակութեան, կատասարոֆայի,—այնտեղ հայտնվում էր ընկեր Ստալինը» (Վորոշիլով):

Տեղ հասնելով, գնահատելով իրադրութունը, ընկեր Ստալինն իրեն հատուկ յեռանդով ու կամքով ձեռնամուխ է յինում Փրոնտի առողջացմանը: Կարգ ու կանոն է մտցնում քաղաքում և շտաբներում: Բացում է զավազրութեան թեկերը ու մերկացնում է թշնամիներին: Եուտափուլթ միջոցառումներով լիկվիդացիայի յե յենթարկում «Կրասնայա Գորկա» ամբոցում ծագած խռովութունը:

Ընկեր Ստալինն անձամբ ղեկավարում է «Կրասնայա Գորկա»-յի դեմ ուղղված մարտական գործողութունները՝ թե՛ ցամաքից և թե՛ ծովից: Կարմիր Բանակի զորամասերը չեչտակի հարձակում են ծավալում: Ընկեր Ստալինի ցուցումով՝ խռովարար «Կրասնայա Գորկա»-յի դեմ ծովի կողմից գործում էին «Պետրոպոլիտսկ», «Անդրեյ Պերվոզվաննի» ղժանավերը, «Ուլեգ» հաճանավը և ակամակիրները: Հունիսի 16-ին «Կրասնայա Գորկա»-ն գրավվեց: Ընկեր Ստալինը Լենինին հեռագրեց.

«Մովային մասնաղետները հավատացնում են, վոր ծովի կողմից «Կրասնայա Գորկա»-յի առումը չըջում է ծովային ամբողջ ղիտութունը: Ինձ մնում է փողբալ այսպես կոչված ղիտութունը»:

«Յերեք շաբաթվա ընթացքում,—գրում է ընկեր Վորոշիլովը,—ընկեր Ստալինին հաջողվում է բեկում ստեղծել: Զորամասերի թափթփվածութունն ու չիտթվածութունն

արագորեն լիկվիդացիայի յեն յենթարկվում, շտարները կարգի յեն բերվում, մեկը մյուսի հետևից տեղի յեն ունենում Պիտերի բանվորներին ու կոմունիստներին մոբիլիզացիաներ, անխնա կերպով փոշնչացվում են թշնամիներն ու դավաճանները»¹ :

Ընկեր Ստալինի՝ բանակի ու նավատորմի մարտական գործողությունները ղեկավարելը Բալթիական նավատորմի նավորդներին հերոսական պայքարի փոզեկոչեց ընդդեմ անգլիական ու սպիտակ-եստոնական նավատորմների :

Հունիսի 4-ին «Ազարգ» ու «Գալբիլի» եսկադրային ականակիրները, մարտի բնակելով անգլիական յերեք ականակիրների ու սուզանավի հետ, ջրասույզ արին Ս 55 սուզանավը :

Մայիսի 18-ին «Գալբիլի» եսկադրային ականակիրը Կապորսկի ծոցում պաշտպանելով ուսկանարկուներին նահանջը, մարտի բռնկեց անգլիական չորս ականակիրների հետ :

Կոիվը տեեց մեկ ժամից ավելի : Չնայած այն բանին, վոր բոլոր առավելություններն անգլիացիներին կողմն էյին, նրանք հեռացան, հաջողություն չհասնելով :

1919 թ. ոգոստոսի 31-ին «Պանտերա» սուզանավը գրոհեց և ջրասույզ արեց անգլիական եսկադրային ականակիր «Վիտտորիա»-յին :

Հունիսի 27-ին Վիդլիցա դետի շրջանում տեղի ունեցավ դետանտային մի ոպերացիա, վորի նպատակն էր լիկվիդացիայի յենթարկել սպիտակ-Ֆիններին բազաները : Ոնեգայի նավատորմից Բալթիական նավատորմի եսկադրային յերկու ականակիրներին և Կարմիր Բանակի դետանտային գործառուների հետ միասին շեշտակի հարվածով թշնամիներին հետ շարտեց դեպի սահմանը և ազահովեց ներքին ջրային հաղորդակցություն ճանապարհների անընդհատությունը Փրոնտի խիստ կարևոր տեղամասում :

Անգլիական նավատորմը, անգլիական տվյալներով, կորցրեց մարտական 16 նավ, նրանցից՝ մեկը հաճանավ և յերկուսը եսկադրային ականակիրներ : Վնասվածքներ ստա-

¹ Վարշիլով, Ստալինը և Կարմիր Բանակը, էջ 18: Հայ. հրատ., 1938 թ. :

ցան 11 նավեր, նրանցից՝ 1-ը հաճանավ, 1-ը սավառնակակիր, 6-ը եսկադրային ականակիր :

Ընկեր Ստալինը բարձր է գնահատել Բալթիական Կարմիր Նավատորմի գործողությունները :

«Ձեռ կարող միջանի խոսք շատել նավատորմի մասին : Չի կարելի չվողջունել, վոր կորած համարվող Բալթիական նավատորմը վերածնվում է ամենախոկական ձևով : Այդ խոստովանում են վոչ միայն բարեկամներն, այլև հակառակորդները... Ե՛լ ավելի ուրախալի յե, վոր Բալթիական նավատորմները նորեն գտան իրենց, իրենց սխրագործություններում վերակենդանացնելով ոուսական հեղափոխական նավատորմի լավագույն տրադիցիաները : Առանց այդ պայմանների Պետրոգրադը չէր կարողանա պաշտպանվել ծովի կողմից սպառնացող ամենախտանգավոր անակնկալներից»¹ :

Հեղափոխություն հանդեպ ունեցած մարտական յերախտիքների համար Բալթիական Կարմիր Նավատորմը սլորգեատրված է Կարմիր դրոշի շքանշանով :

1918 թ. ընկեր Կիրովը Ատորախանում ստեղծում է Կասպիական ռազմական նավատորմիղի ամուր միջուկը : 1919 թ. մայիսին այդ նավատորմիղի նավերը բռնեցին սպիտակների «Լեյլյա» նավը՝ ղեներալ Գրեչին-Ալմագովի հետ միասին, վորը Կոլչակին էր տանում Մոսկվայի վրա միատեղ հարձակվելու դենիկինյան պլանը :

Բազվի ազատումից հետո Կասպիական նավատորմիղի դետանտը գրավում է Լենքորան քաղաքը : Ընկեր Որջոնիկի-ձեյի նախաձեռնությունով, մեր ծովային հաղորդակցություն ճանապարհների լիակատար ազահովություն համար, նավատորմիղը ձեռնարկում է Ենդելի նավահանգստում սպիտակ մոտենում է Ենդելիին և անգլիական զորքերի հրամանատարի առաջ ուլտիմատում է գնում Ենդելին անհասարակ հանձնելու մասին : Այնուհետև, ուլտիմատումի ժամկետը լրանալուց հետո, կրակ է բացվում անգլիական զորքերի վրա : Կասպիական նավատորմիղի դետանտը անգլիացիներին հար-

¹ «Правда», 23 փետրվարի, 1935 թ. :

կազմում է Ենդելին հանձնել: Խլվում է 10 հաժանալ, 7 ծո-
վային արանսպորտ, տորպեդային կամերներ, ինքնաթիռ-
ներ, թիզանոթներ, արկեր և այլն:

Աղուլի նավատորմից ստեղծված էր ցեխակիր գետանա-
վակներից և հաջողութամբ կազմում էր Վրանդելի դեսանտ-
ների ղեմ Տաղանդուզի ծոցում և Կուբանում: 1920 թ. սեպ-
տեմբերի 15-ին նավատորմից ծովային մարտի բռնակց հա-
կառակորդի հետ Որբտոչնայա լեզվակի մոտ և վոչնչացրեց
թշնամու հրետաձիգ նավակը, ստիպելով սպիտակներին
հրաժարվել Բերդյանսկը և կարմիր զորքերի թևը դնողակ-
ծելուց:

1920 թ. հունիսին ընկեր Ստալինի ղեկավարութամբ
ստեղծված Դնեպրի նավատորմից, վորին ընկեր Վորոշի-
լովը 1919 թ. ապրիլին առաջին հաղթական մարտի յեր ա-
ռաջնորդել ընդդեմ պետլյուբականների, բանվորների հետ
միասին մասնակցում է Կիևի առմանը և այն իր ձեռքում է
պահում մինչև Կարմիր Բանակի գալուստը:

Միութան ծովերում ու գետերում, դեսանտային ջո-
կատներում, Կարմիր Բանակի զորամասերում, հեծելաղու-
րում և զբահանացներում, ամենուրեք, վորտեղ հայրենի-
քին վտանգ էր սպառնում, Լենինի—Ստալինի մեծ կուսակ-
ցութան համախմբած ու ղեկավարած զինվորական կարմիր
նավորդները մարտի եյին զնում ու հաղթանակում: Քաղա-
քացիական պատերազմի մարտերում կարմիր ծովապնացներն
ստեղծեցին Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Մովային Նա-
վատորմի մարտական փառքը:

Ամբողջ 1917—1922 թ.թ. քաղաքացիական պատերազմի
ժամանակաշրջանում ստեղծված էր 3 ծովային և 12 գետա-
յին ու լճային ուղղական նավատորմից: Յամաքային
Փրոնտներում (Եքսպեդիցիոն ու գետանտային ջոկատներում)
զործում էյին ավելի քան 75 հազ. նավորդներ:

1919 թ. հոկտեմբերի 21-ին ականներով կործանվեց 3
եակադրային ականակիր: Մովի անդունդը դնացող նավերի
վրա լավում էյին «ուռա» բացականչություններ: Կարմիր
նավորդները մեռնում էյին փառք ու պատվով, մարտական
փողփողուն գրոշակով:

«Շատ ու շատ հազարավոր անվեհեր մարտիկներ իրենց

կյանքը տվին ժողովրդի զործի համար, մարտնչելով Կար-
միր Բանակի և Ռազմա-Մովային Կարմիր Նավատորմի շար-
քերում: Ժողովրդական այնպիսի հերոսների անունները,
ինչպես Չապայեվը, Շչորսը, Ռուզնեվը, Պարխոմենկոն,
Լազոն, Դունդիչը, նավաստի Ժեկեզնյակովին ու շատ ուրիշ-
ներն են, մշտապես կապրեն սերունդների սրտերում: Խոր-
հրդային շնորհակալ ժողովուրդը նրանց մասին իր յերգերն
է հյուսում, նրանց մասին գրում են և դեռ շատ գրքեր
կգրեն:

Նրանք մեր յերիտասարդությանը սիրազործությունների
ու հերոսության են վողեկոչում և իր ժողովրդին, Հայրենի-
քին և Լենինի—Ստալինի մեծ զործին անսահմանորեն նվիր-
ված յինելու սքանչելի օրինակ են ծառայում»¹:

Կարմիր Մովային Նավատորմի հաղթական պայքարում
բացառիկ մեծ դեր խաղացին մեր բոլշևիկյան զինվորական
կոմիտարները, քաղաքախնները և կուսակցական կազմակեր-
պությունները:

«Առանց զինկոմի մենք Կարմիր Բանակ չեյինք ունենա»
(Լենին):

Լենինի այս գրույթն ամբողջապես վերաբերում է նաև
ծովային նավատորմին, վորտեղ կուսակցության ներկայա-
ցուցիչները—զինվորական կոմիտարները հանդիսանում էյին
բոլշևիկյան տոկունության, կարգապահության, հաստատա-
կամության, կայունության ու արիության վողու կրողնե-
րը: Նրանք կայտառություն ու յեռանդ էյին սերմանում մար-
տիկների շարքերում, անձնական օրինակով վողեչնչում էյին
նրանց և հաղթանակի էյին առաջնորդում խորհրդային հայ-
րենիքի թշնամիների վրա: Քաղաքախններն ու կուսակցական
կազմակերպությունները նավորդներին համախմբում էյին
բոլշևիկների յողունդների տակ, մարտիկների մեջ անսասան
հավատ էյին դաստիարակում դեպի սոցիալիզմի հաղթանա-
կը: Չինվորական կոմիտարների, քաղաքախտողների և բոլոր
կոմունիստների աշխատանքը կուց Կարմիր Նավատորմի
հզորությունը:

¹ Ворошилов, XX лет РККА, стр. 3.

ԾՈՎԱՅԻՆ ՅԵՎ ՈՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՀԶՈՐ ՆԱՎԱ- ՏՈՐՄԻ ՀԱՄԱՐ

Քաղաքացիական պատերազմից հետո Կարմիր Նավատորմը մեծագույն ավերմունքի ճանկերում գտնվեց: Սեծովյան նավատորմը փաստորեն դադարեց գոյություն ունենալուց: Նրա մի մասը 1918 թ. ջրասույզ էր արված հեղափոխական նավորդների կողմից, իսկ մի մասն էլ սպիտակ-գվարդիականները տարել էլին արասահման:

Մեր տնօրինություն տակ մնացած ուղղմանավերը շեյնզործում: Բալթիկի նավերը 1920 թ. կանգնած էլին Կրոնշտադտի խարսխակայանում առանց շոգու, վառելիք չկար:

Ավելի լավ չէր նաև նավորդների կազրերի բանը: Քաղաքացիական պատերազմի տարիներին նրանք ցրված էլին բազմաթիվ ցամաքային Փրոնտներում: Հոկտեմբերյան հեղափոխության համար մղած մարտերում փորձված ու կոփված նավորդների հին միջուկը ատտիճանաբար նվազում էր: Նավատորմը կանոնավոր համալրում չէր ստանում:

Նավատորմ թափանցեցին թշնամական տարրեր, արասահմանից ուղարկված լրտեսներ, ստարերկրյա հետախուզությունների տրոցիխասական-բուխարինական գործակալներ: Նրանք վնասարարական ու զիվերսիոն աշխատանք էլին սանում Կարմիր Նավատորմի ներսում:

Ծանր գրությունն էլ ավելի յեր բարդանում այն ընդհանուր ավերմունքով ու սովով, վոր սպրում էր ամբողջ յերկիրը:

Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի նախաձեռնությամբ կուսակցության X համագումարը վորոշում ընդունեց, վորի մեջ անհրաժեշտ ճանաչվեց՝ «Պորհրդային Հանրապետություն ընդհանուր գրությունն ու նյութական միջոցներին համապատասխան միջոցներ ձեռնարկել ուղղման Կարմիր

Նավատորմը վերակենդանացնելու ու ամրացնելու համար»:

Այդ վորոշումն սկիզբ դրեց Ռազմա-Օովային Նավատորմի վերականգնմանը:

Պորհրդների Համատուսական IX համագումարը (1921 թիվ), ի զարգացումն կուսակցության X համագումարի վորոշման, վորոշեց.

«Հաշվի առնելով ուսական ու ստարերկրյա հակահեղափոխության նենդություն ու զիշաաչություն ուղղման նավատորմին հասած ծանր հարվածները, համագումարը գոհունակություն ունում և զինվորական լավագույն նավորդներին՝ արդի ծանր պայմաններում նավատորմի կենդանի միջուկը պահպանելու ջանքերը և հաստատ համոզվածություն է արասահայտում, վոր յերկրի տնտեսական կյանքի սկսվող առողջացումը թույլ կտա Կարմիր Նավատորմին կատարելու իր պարտականությունները սոցիալիստական հանրապետություն ծովային մասուլցները պահպանելու ուղղությամբ»:

Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումով կոմսոմոլը նավատորմի շարքերն է ուղարկում 2 հազ. լավագույն կոմսոմոլիստներին:

1922 թ. կոմսոմոլի V համագումարը վորոշում է հանում Ռազմա-Օովային Նավատորմի վրա կոմսոմոլի կողմից չեփություն վերցնելու մասին: Կոմսոմոլը մի շարք մորիլիզացիաներ է անցկացնում և նավատորմ է ուղարկում տասնյակ հազար լավագույն կոմսոմոլիստներին: Կոմսոմոլիստներն ու խորհրդային վոզլ յերիտասարդությունը յերջանիկ էլին համարում այն պատանիներին, վորոնք մորիլիզացիայով ընտրված էլին նավատորմ գնալու:

1923 թ. սկզբին մեր կուսակցությունն անցկացրեց մասսայական քաղաքական կամպանիա—«Կարմիր Նավատորմի շարաթը»: Ամբողջ յերկրում տեղի ունեցան շարաթորյակներ, վորոնցից ստացված միջոցները մտան նավատորմի վերականգնման Փոնդի մեջ: Ցարրիկաներում և գործարաններում առաջացան ուղղա-ծովային խմբակներ:

Կուսակցության ու կառավարության կողմից վճռական միջոցներ ձեռնարկվեցին Ռազմա-Օովային Նավատորմը վերականգնելու ուղղությամբ: Ռազմա-Օովային Նավատորմի ամրացման գործում աչքի ընկնող դեր խաղացին՝ փորձված

բողեկի, պրոլետարական գործաւոր Միւսայիւ Վասիլյեւիչէ Ծրունցեն, իսկ նրա մահից հետո—Լենինի և Ստալինի համատարիժ աշակերտ, Խորհրդային Միութեան մարշալ Կլիմենտ Յեֆրեմովիչ Վորոշիլովը:

Նախտորմի մասնայական համալրումը կոմսոմոլիստներով և մեր առաջաւոր յերիտասարդութեամբ՝ տվեց իր բարեհաջող արդյունքները, և նախտորմը քայքայված լինելուց դարձավ գործոն ու հզոր:

Վերականգնման ժամանակաշրջանում Խորհրդային պետութեան անցկացրեց մի շարք ձեռնարկումներ Ռազմա-Մովային Նախտորմի շինարարութեան ուղղութեամբ, բայց այդ ժամանակ նա դեռևս իր տրամադրութեան տակ անհրաժեշտ միջոցներ չունէր Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Մովային այնպիսի հզոր նախտորմ ստեղծելու համար, վոր պետք է ունենա սոցիալիզմի յերկիրը:

Խորհուրդների III համագումարում 1925 թ. մայիսին Մ. Վ. Ծրունցեն նախտորմի մասին ասում էր.

«Մենք այժմ մեր արամագրութեան տակ միջոցներ չունենք, վորպեսզի այն դարձնենք այն մեծութեանը, վոր կհամապատասխանէր մեր ծովային սահմանների յերկայնութեանը և մեր ծովային պաշտպանութեան շահերին: Բայց մենք հույս ունենք, վոր մեր եկոնոմիկայի բարելավումը և մեր Ֆինանսների ամրապնդումը հետագայում մեզ այդ հնարավորութեանը կբացեն»¹:

Մեր ժողովրդի համար այդ հնարավորութեանը բացեցին ստալինյան հնգամյակները: Նրանք ստեղծեցին ինդուստրիալ բազա, վորն ապահովում է ժամանակակից նավերի բոլոր տեսակների շինարարութեանը մեր հայրենի գործարաններում, մեր կայրերով: Ժամանակակից նավը ամենաբարդ տեխնիկական կառուցվածք է: Չկա արդյունաբերութեան և վոչ մի ճյուղ, վոր նավի վրա ներկայացված չլինի: Նրա մեջ, ինչպես հայելում, արտացոլված է արդյունաբերութեան տեխնիկայի մակարդակի վիճակը:

Տակալին 62 տարի առաջ Ենդելսը գրում էր.

«Նորագույն մարտանավը ներկայացնում է վոչ միայն

արտադրանք, այլ նաև նորագույն խոշոր արդյունաբերութեան արվեստի մի նմուշ՝ լողացող ֆարբիկա... Այն յերկիրը, վորում խոշոր արդյունաբերութեանը ամենից ավելի յե զարգացել, համանման նավերի կառուցման գրեթէ կատարյալ մոնոպոլիայի տերն է»¹:

Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի հիման վրա կառուցվում, նոր նավերով, հրետանիով, առափնյա պաշտպանութեան ամրացված շրջաններով, ծովային ավիացիայով համալրվում էր մեր Ռազմա-Մովային Նախտորմը: Արդեն Համկ(Բ)Կ XVII համագումարում Խորհրդային Միութեան մարշալ Կ. Յե. Վորոշիլովը հայտարարեց.

«Ընկեր Ստալինի մշտական ու անմիջական մասնակցութեամբ ու ղեկավարութեամբ մենք աշխատում ենք նաև մեր Ռազմա-Մովային ուժերի ուժեղացման վրա, վորոնք մեր բազմահազար կիրոմետր ծովային սահմաններ ունեցող յերկրի պաշտպանութեան համար մեծ նշանակութեան ունեն: Ընկ. Սերգան այդ գործում, խոսքը մեր մեջ մնա, նույնպես մեծ բեռնավորում ունի: Վերջին տարիներս մենք վոչ միայն ամրացրինք և ուժեղացրինք Բալթիկ և Սև ծովերի ծովային ուժերը, այլև, ռզավելով այն բանից, վոր ընկ. Կիրովը» Բեյրոմորը կառուցողների հերոսական բանակի գլուխ անցած միացրեց Սպիտակ ծովը Բալթիկին, «նոր ջրանցքով Հյուսիս նեոեցինք նավերի մի վորոշ քանակ, վորպեսզի անպաշտպան չլինենք և այդ տեղամասում:

Բացի դրանից, Պրիմորյեյի վրա հարձակվելու անմիջական սպառնալիքը մեզ հարկադրեց ձեռնամուխ լինել սաղմա-ծովային ուժերի ստեղծմանը և Հեռավոր Արևելքում...

Վերջացնելով մեր ծովային ուժերի մասին ասելը, յես կրկին անգամ հարկավոր եմ համարում նշել, վոր ընկեր Ստալինն, ինչպես պետք է, ստալինաբար լծվեց և այդ տեղամասին, և յես չեմ տարակուսում, վոր ինդուստրիալիզացիայի հաղթանակների բաղաչի վրա ամրացած նավաշինարարական արդյունաբերութեանը կողմի մեզ մեր նավատորմները արագորեն դարձնելու իսկապես հզորագույն Բանվորա-գյուղացիական նավատորմներ»:

¹ Фрунзе, Статьи и речи, стр. 398—399, 1936 г.

¹ Энгельс, Избранные военные произведения, т. I, стр. 12.

Մտայինյան յերկու հնգամյակների հաջող կատարման, հզոր մեծապուրջիայի, մեքենաշինության, գործիքների շինարարության, արդյունարերության եներդեալի և ուրիշ տեսակների ստեղծման հետեանքով մեր սոցիալիստական տերությունը լայնորեն ծավալեց ԽՍՀ Միության հզոր Ռազմա-Մովային Նավատորմի շինարարությունը: Խորհրդային նավաշինությունը, ստեղծելով նոր մարտանավեր, համազործում էր մեր յերկրի արդյունարերության այլ ճյուղերի ալեյի քան 200 գործարանների հետ: Հանրազուժարն այն է, զոր ներկայումս նոր մարտանավերով, հրետանային, ակա-նային ու տորպեդային սպառազինությամբ, ժամանակակից սարքերով ու մեխանիզմներով մոզեռնացված ու ամրացված են մարտական նավատորմները Բալթիկ և Սև ծովերում, անճանաչելիորեն աճել են ռազմա-ծովային նավատորմների մարտունակությունն ու հզորությունը Հյուսիսում և Խաղաղ օվկիանոսում:

Ամրացված և ի նորո սպառազինված են ռազմական նա-վատորմիղները: Մեր ափերը վերածված են անառիկ ամրո-ցի: Սպառազինման ու տեխնիկական հաղեցման մի քանի տեսակների ուղղությամբ Ռազմա-Մովային Նավատորմը տասնապատկել է իր մարտական ուժերը: Այս ստեղծման տեսանկի յե ընկեր Մտայինի առաջնորդող ձևերը: Չկա նալի և վոչ մի նախադիծ, և վոչ մի թնդանոթ, Ռազմա-Մովային Նավատորմի շինարարության վոչ մի մեծ, թե փոքր հարց, զորը չանցներ ընկեր Մտայինի ձեռքով, և վո-րի վերարերջալ նա չտար կոնկրետ ու սպառիչ ցուցումներ:

Նավատորմի շինարարության և նրա մարտական ու քաղաքական պատրաստության ուժեղացման խնդիրները կազմակերպական փոփոխություններ պահանջեցին նաև Ռազմա-Մովային Նավատորմի ղեկավարության բնազալա-սում:

«Վորպեպի կազմակերպենք այլ նավատորմն իր տեխ-նիկական բարդ հաղեցվածությամբ, իր ծովային հզոր հրետանիով, խորհրդային նավատորմի արժանավորությանը համապատասխանող իր ծովային ալիացիայով,—ասում էր ընկեր Մորտովը ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի I Սեփա-յում,—և վորպեպի խորհրդային ձևով դաստիարակենք վո-

րակյալ ծովագնացների ու ծովային տեխնիկների բազմա-թիվ կադրերը, հարկավոր է նոր ժողկոմատ, հարկավոր է Ռազմա-Մովային Նավատորմի ժողկոմատ»:

ԽՍՀ Միության Ռազմա-Մովային Նավատորմի ժողկո-մատի կազմակերպումը և նավատորմի այլ ղեկավար որ-դանների ուժեղացումը, նոր տաղանդավոր կադրերի՝ ղեկա-վար աշխատանքի առաջընթացումը ամրապնդեցին Ռազմա-Մո-վային Նավատորմի մարտական ու քաղաքական պատրաս-տության կազմակերպական ղեկավարությունը:

Համկ(ր)Կ XVIII համազուժարում ընկեր Մտայինը վոր-պես սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրնե-րից մեկը դրեց Ռազմա-Մովային Նավատորմի հետագա ամրապնդման խնդիրը:

Ամրապնդել Ռազմա-Մովային Նավատորմի մարտական հզորությունը—այլ ամենից առաջ նշանակում է նոր մար-տանավերով, նոր հրետանիով, ակառային ու տորպեդային սպառազինությամբ, ամենաարդիական ու կատարելագործ-ված գործիքներով ու մեխանիզմներով համալրել հիմնական զործող նավատորմը, ստեղծել նավատորմի ԵՂ ալեյի հզոր արդյունարերական տեխնիկական բազա:

Մտայինյան յերրորդ հնգամյակը ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմաններն ամեն ախլի նավերի շինարարու-թյան համար՝ սկսած արագընթաց կատերներից մինչև ծո-վային ամրացները—զճանավերը: Տնտեսության սոցիալիս-տական սիստեմի առավելությունները մեղ թույլ են տա-լիս նավատորմը կառուցել ալեյի արագ, ալեյի էժան և ա-վելի լավ: ԽՍՀ Միության Ռազմա-Մովային Նավատորմի շինարարության տեմպերն արժատապես տարբեր են առա-ջավոր կապիտալիստական յերկրների ծովային շինարարու-թյան տեմպերից և անտարակույս կզերազանցեն նրանց: Ար-դեն այժմ մշակված է մի ախլի մարտանավի՝ հանրաճանաչ ժամկետները 40%—ով կրճատող արագ մեթոդներով կա-տարվող կառուցման տեխնոլոգիական պրոցեսը: Կրճատվում է մարտանավերի շարժընթացիկ փորձարկումների տևողու-թյունը:

Ռազմա-Մովային Նավատորմի մարտանավերի կառուց-ման ժամկետի կրճատման խնդիրը վճուվում է վո՛չ միայն

նախաշինական գործարաններում: Այս խնդրի լուծման մեջ վիթխարի դեր է խաղում մեքենաշինական ու մետաղամշակման արդյունաբերությունը: 1942 թ. մոտերքին մեքենաշինություն ու մետաղամշակման դժով յերրորդ հնգամյապահի պլանով սահմանված է 63 միլիարդ ուրբ. արտադրանքի բացթողում՝ 1926/27 թ. գներով: Այդ 1937 թ. հարաբերությունը կհասնի 229% ու կբախարարի մեք կարիքները, այդ թվում է Ռազմա-Մովային Նավատորմի պահանջմունքները:

Յեթե ցարական Ռուսաստանում գրեթե բոլորովին չէին արտադրում շոգետուրբիններ, ապա ստալինյան յերկու հընգամյակները եներգետիկ մեքենաշինության բնադախտում Սորհրդային Միությունն ազատեցին ոտարեկրյա կախումից: Իսկ յերրորդ հնգամյակում շոգետուրբինների բացթողումը մեծանում է 5,9 անգամ, շոգեկաթսաներինը—5,2 անգամ: Ռազմա-Մովային Նավատորմի շինարարությունը յերրորդ հնգամյակում լիովին ապահովվում է նավային դեզներով, մետաղամշակման դաղգյահներով, սև և գունաւոր մետաղներով, հատուկ պողպատներով, կարծր ու հեղուկ վառելանյութով:

Առևտրական նավատորմի վիթխարի շինարարությունը, ջրային ճանապարհների 101 հազարից մինչև 115 հազ. կիլոմետր ավելացումն ու նրանց կարգավորումը, հունների (фарватер) մաքրումը, Հյուսիսային ջրային ճանապարհը նորմալ գործող մագիստրալ դարձնելը—այս ամենը վիթխարի դեր են խաղում ՍՍՀՄ Ռազմա-Մովային Նավատորմի ուժի ու մարտունակության ամրացման գործում:

Սորհրդային Միությունն ունի ռազմա-ծովային ու ուկիհանոսային հզոր նավատորմի շինարարության համար անհրաժեշտ բոլոր սեուրանները: Ծովային ու ուկիհանոսային հզոր նավատորմը կառուցում է վողջ խորհրդային ժողովուրդը: Ուստի պատահական չէ, վոր գործող նավատորմն սպառազինելու համար, մանավանդ վերջին տարիներս, սկսում են մասսայական քանակով մտնել նոր մարտանավեր, մեր հայրենի գործարաններում կառուցված նոր մարտական տեխնիկա, գործիքներ ու մեխանիզմներ: Ծարք մտնող վերջերյա և ստորջրյա նավերն իրենց վորակով չեն զիջում,

իսկ հաճախ գերազանցում են առաջավոր կապիտալիստական յերկրների լավագույն նավերին:

Եսկազրային ահանակիւր լիդեր «Մոսկվա»-յի գեպի Քյուրքիա կատարած յերթը, մի խումբ մարտանավերի՝ Սեաստպոլից Հնդկական ուկիհանոսով դեպի Վլադիվոստոկ անցնելը, այլ նավերի հեռավոր ռեյսերը ցույց տվին սքանչելի ծովազնացության վորակ: Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Մովային Նավատորմի շինարարության լայն թափը և նավատորմի համալրումը նորագույն բարդ տեխնիկա ունեցող մարտանավերով առաջին պլան մղեցին և վճռական խնդիր դարձրին ռազմա-ծովային բարձրորակ կազրերի պատրաստումը:

Ընկեր Ստալինը կուսակցությանն ու ժողովրդին սովորեցնում է.

«Տեխնիկան շարժման մեջ դնելու և մինչև վերջն ոգտագործելու համար հարկավոր են տեխնիկային տիրապետած մարդիկ, հարկավոր են այնպիսի կազրեր, վորոնք ընդունակ լինեն յուրացնելու և ոգտադործելու այդ տեխնիկան արվեստի բոլոր կանոններով...»

Պետք է, վերջապես, հասկանալ,—ասում էր այնուհետև ընկեր Ստալինը,—վոր աշխարհում գոյությունն ունեցող բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավոր ու ամենավճռական կապիտալը մարդիկ են, կազրերը: Պետք է հասկանալ, վոր մեր ներկա պայմաններում կազրերը վորոչում են ամեն ինչ»¹:

Կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը, կատարելով ընկեր Ստալինի ցուցումները, արդեն դասախարակել ու պատրաստել են Ռազմա-Մովային Նավատորմի նախաշինարարների ու մասնագետների բարձրորակ կազրեր: Դրա փայլուն հաստատումն է հանդիսանում նախաշինարարական արդյունաբերության բանվորներին՝ աշխատանքային արիություն համար Սորհրդային Միության շքաններով ու մեդալներով բարձր պարգև տալը:

Ձրուկեյի անվան Ռազմա-Մովային կարմրազրոշ բարձ-

¹ Ստալին, ճառ՝ կարմիր Բանակի ահադեմիականների ավաբաման ասիւի, 1935 թ. մայիսի 4-ին. Հայկուսհրատ, էջ 21, 28, 1935 թ.:

բազույն դպրոցը, Զերժինսկու անվան ռազմա-ծովային էն-
ժեներական բարձրագույն դպրոցը և ստորըրջա նախարկ ու-
թյան՝ Կերովի անվան ուսումնական ջոկատը պարզեատրը-
ված են Խորհրդային Միության բարձրագույն պարզեակե-
րով—ԽՍՀՄ-ի շքանշաններով:

Այդ դպրոցների տասնյակ հրամանատարներ, կոմիտար-
ներ, պրոֆեսորներ և ինժեներներ կազրերի պատրաստման
գործում հայրենիքի հանդես պատրաստած առանձնահատուկ
ծառայությունների համար պարգևատրված են Խորհրդային
Միության շքանշաններով ու մեդալներով:

Ռազմա-Մովային դպրոցները վերջին տարիների ընթաց-
քում համարվում են բարձրագույն ու լրիվ միջնակարգ
կրթություն ունեցող յերիտասարդ ընկերներով: Ռազմա-Մո-
վային ուսումնական հաստատությունների կուրսանտների
մեջ 94%-ը կոմունիստներ ու կոմսոմոլիստներ են: Խորհրդ-
ային յերիտասարդ հայրենասերները պատիվ են համարում
ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Մովային Նախա-
տորմում ծառայելը: Նրանցից հարյուրավորներն ու հազար-
ավորները ծառայելով նավատորմում, համառոտն աշխա-
տում են ռազմա-ծովային բարդ գործի տիրապետման վրա,
իրենց մարքս-լենինյան կրթության բարձրացման վրա: Նրանց
սպասարկում են մարքս-լենինյան թեորիայի վերաբերյալ,
տեխնիկայի ու ռազմա-ծովային գիտության վերաբերյալ
միլիոնավոր դրքային ֆոնդեր ունեցող հազարավոր դրադա-
րաններ, Ռազմա-Մովային Նավատորմի տասնյակ տներ ու
կարմիր-նավատորմային թաարոններ, հարյուրավոր ակումբ-
ներ ու լենինյան սենյակներ, վորոնց խնդիրը գինվորական
ծովազնացների կոմունիստական դատարարակությունն ու
տեխնիկական գիտելիքները բարձրացնելն է:

Տարեցտարի ավելանում են Ռազմա-Մովային Նավատոր-
մի կազրերի քաղաքական ու կուլտուրական դատարարակու-
թյան վրա կատարվող հատկացումները: 1939 թ. մենք ու-
նենք քաղաքական-լուսավորական աշխատանքի համար բաց
թողնված գումարների՝ 1938 թ. համեմատությամբ 59%-ի
ավելացում: Ռադիոհանգույցների քանակը կարմիր Նավա-
տորմում 1934-ից մինչև 1938 թ. աճեց 3,5 անգամ, ստա-
ցիոնար ռադիոսարքավորումների քանակը—7 անգամ: Մեր

նավատորմը կուսակցական ու անկուսակցական բոլշևիկներ
կոմունիստական ու ռազմա-ծովային դատարարակության մի
խակական դպրոց է, մարդիկ, վորոնք մինչև վերջը նվիրված
են իրենց սոցիալիստական հայրենիքին ու իրենց ժողովրդին,
վորոնք պատրաստ են ուղած դրպելին բոլոր ուժերն ու
գիտելիքները, իսկ յերբ հարկավոր է՝ ապա և՛ կյանքը նվի-
րելու հանուն Լենինի—Ստալինի գործի:

Տարեցտարի հսկայական ծովային տարածություններ ու-
նեցող մեր յերկիրը նավատորմին տալիս է այնպիսի մար-
դիկ, վորոնք դեռ մանկությունից սովորել են ծովին, կոփել
ու մարդել են իրենց: Ռազմա-Մովային ծառայության և
գնում կուլտուրայես բարձր, քաղաքականապես գիտակից,
Փրկիկապես առողջ ու տաղանդավոր խորհրդային յերիտա-
սարդությունը: 1938 թ. գորակոչը նավատորմին տվեց յե-
րիտասարդության 93%-ը 5—10 դասարանների կրթու-
թյամբ, վորոնցից կարելի յե պատրաստել ծովային գերա-
զանց մասնագետներ: Սոցիալիստական կուլտուրայի հետա-
դա դարգացումը մեր յերկրում է՛լ ավելի կբարձրացնի նա-
վատորմ գորակոչվող խորհրդային յերիտասարդ հայրենա-
սերների կուլտուր-քաղաքական մակարդակը:

Մովազնացների ժողովուրդը, հերոսների ժողովուրդը
նավատորմ է ուղարկում իր լավագույն զավակներին:

Ալեքսանդրա Իվանովնա Մուրալյեյան իր յերկու վոր-
դիներին, Գեորգիին և Վասիլին նավատորմ ճանապարհ
գցելով, ասում էր նրանց. «Ձեզ, իմ գավակներ, տրված է
կարմիր նավատորմայինների պատվավոր կոչում: Արդարաց-
րե՛ք այդ կոչումը, անձնվիրաբար պաշտպանեք մեր ծովա-
յին սահմանները Փաշիտներից, լավ սովորեք ծովային գոր-
ծը, իսկ յեթե հարկ կլինի, մի՛ խնայեք և ձեր կյանքը: Յևս
ուրախ եմ, վոր դուք ծառայելու յեք գնում: Իմ մասին մի՛
անհանգստանաք: Մեր կառավարությունն ու հարազատ
Ստալինը չեն մոռանա յերկու կարմիր-նավատորմայինների
մորը: Ստալինյան Սահմանադրությունն ինձ իրավունք է ա-
պահովել ողնություն ստանալու իմ անաշխատունակության
դեպքում»:

Նավատորմ ընդունվելուց հետո հայրենասեր յեղբայր-
ները նամակով ժողկոմին դիմեցին, վորի մեջ հայտարարե-

ցին. «Ծառայութիւնը Ռազմա-Մովային Նախատրմում պատվաւոր ծառայութիւնն է, և մենք վորպես մեր հայրենիքի անձնակեր հայրենասերներ, մեզ վրա յենք վերցնում այդ պարտականութիւնը, վորպեսզի յուրաքանչյուր բոլոր թըշնամիներէից պաշտպանենք մեր սրբազան սահմանները: Մեր հայրենիքի վրա թշնամիներէ հարձակելու դեպքում մենք կկռուենք հենց այնպես, ինչպես մեր փառապանծ կարմիր-բանակայինները կռիւցին Սասան լծի մոտ:

Մեզնից մեկին արտոնութիւնն եր արվում, բայց մեր մայրն ասաց, վոր մենք հրաժարվենք արտոնութիւնից և յերկուսով ել յեկել ենք ծառայելու Ռազմա-Մովային Նախատրմի մարտիկներէ շարքերում: Մենք յերկուսս ել անհուսակցական, մանկելով նոր կյանք, պարտավորվում ենք յինել լիարժեք մարտիկներ, հավատարիմ՝ Լենինի—Ստալինի գործին:

Մարտական ու քաղաքական պատրաստութեան գծով մենք պարտավորվում ենք սովորել միայն լայլ ու դերագանց, ինչպես և վայել է իսկական մարտիկ-կարմիր-նավատորմայինին»:

Անհուսակցական բուշետիկներէ պարտավորութիւնը հիմնավորված է: Գեոլոգի մինչև նավատորմում ծառայութեան անցնելը Ռիսէ քաղաքի տպարանի գրաշար Վասիլի Մուրալյեւին իր արտադրական նորման կատարում եր 180—200%—ով և լավագույն ստախանովականներէից մեկն եր: Գեորգի Մուրալյեւիը պաշտպանական աշխատանքի ենաուղիաստ եր և, գտնվելով նախապորակիչիկներէ լագերներում, հինգ խութուցանք եր ստացել մարտական ու քաղաքական դերագանց պատրաստութեան համար: Այդ ակննավոր մարդիկ այժմ ծառայում են Ռազմա-Մովային Նախատրմում: Նրանք համառ կերպով ախրապետում են ռազմա-ժովային բարդ գործին և մարտական ու քաղաքական պատրաստութեան առաջավորներ են:

Անաստասյա Ռոզիյոնովնան, Կորլիկով յեղբայրների մայրը, իր վորդիներին նավատորմ ճանապարհ գցելով, ասաց.

«Ինք պետք է խնդրեք, վոր Բալթիկում ծառայեք,

վորտեղ աշխատում է ձեր յեղբայրը: Ինք նայեք Գյոարին, թէ ինչ մարդ դարձրեց նրան նավատորմը»:

Կարմիր նավատորմում իրենց ծառայութեան առաջին խակ սրից յեղբայր Կորլիկովներն իրենց յուր յովին, վորպես մարտական ու քաղաքական պատրաստութեան դերագանցիկներ, իրենց ժողովրդի անձնակեր զավակներ: Նրանց անունները հայտնի յեն ամբողջ յերկրին: Յեղբայր Կորլիկովներին ամեն ոք նամակներ և ն գալիս անմայրածիր Խորհրդային Միութեան զանազան ծայրերից:

Ձեւյարինսկի նախապորակիչիկները հպարտանում են յերեք հայրենասերներով, նրանց հաջողութիւններ և ն ցանկանում յտորջրյա նավատորմի ծառայութեան մեջ: Լենինգրադի մօի կոմբինատի աղջիկները նրանց դբում են. «Ժամիչ չորսին մենք, ինչպես սովորաբար, լրագիր ասացանք: Յերկրորդ ելում մեր ուշագրութիւնը գրալեց մի նկար, վորի տակ գրված եր «Կորլիկով յեղբայրներ—մարտական ու քաղաքական պատրաստութեան դերագանցիկներ»:

Ընկերուհի Վերան կարգաց ձեր մասին գրած թղթակցութիւնը: Կարգալով այն, մենք ել վորոշեցինք ձեզ մի փոքր նամակ գրել: Մենք սքանչացած ենք ձեզնով—Պյոտրով, Սոյոսոյով ու Մերգելով, սքանչացած ենք Ռազմա-Մովային Նախատորմում կատարած ձեր ծառայութեամբ: Բոլորն ել ուրախ են ձեզ համար, ձեր դերագանց ուսման համար, ձեր սքանչելի մոր համար, վոր այդպիսի վորդիներ է դաստիարակել: Ձեր ուրինակը լցնում է մեր սրտերը հպարտութեամբ, ել ավելի յենք ուզում ապրել և սիրել մեր հրաշալի, թանկագին հայրենիքը»:

Խորհրդային ժողովրդի բարձր հայրենասիրութեան, դեպի Ռազմա-Մովային Նախատորմը տածած նրա ջերմ սիրո ուրինակներն անվերջ են: Ռազմա-Մովային Նախատորմն իր տրամադրութեան տակ ունի այնպիսի նշանավոր կադրեր, վորոնց կարող է նախանձել յուրաքանչյուր կապիտալիստական ժովային պետութիւն:

Կոմունիստական կուսակցութեան, անձամբ ընկեր Ստալինի, նրա հավատարիմ աշակերտներէ, ընկերներ Մոլոտովի, Վորոշիլովի և Ժդանովի ոգնութեամբ նավատորմը մաքրված է լրտեսներից, մասնիչներից, տրոցկիստական-

բուխարինական բանդիտներից ու մարդասպաններից: Նախկե-
րի, զորամասերի ու նավատորմի ղեկավար պոստերում ամ-
բողջովին առաջ են քաշված յերիտասարդ, պրակտիկ ու
քաղաքական աշխատանքում ստուգված, տաղանդավոր ու
պատրաստված հրամանատարներ, կոմիտարներ, ինժեներներ
և այլ մասնագետներ: Ռազմա-Մովսիսյան Նավատորմի հրա-
մանատարներն ու կոմիտարները, Հինայելով իրենց ուժերը,
աշխատում են նախերի ու զորամասերի մարտական ու քա-
ղաքական պատրաստութան ամրապնդման վրա: Մոցիալիս-
տական մրցութան մեթոդով, մարտական ուսուցման հմուտ
կազմակերպումով նրանք արդեն ձեռք են բերել խոշոր հա-
ջողութուններ:

Չինվորական կոմիտարը կատարում է պատասխանատու
ու կարևոր դեր: Հրամանատարն ու զինվորական կոմիտարն
իրենցից ներկայացնում են մի միասնական ամբողջութուն՝
նախի, զորամասի մարտական ու քաղաքական ուսուցման ղե-
կավարման մեջ: Նրանք յերկուսն էլ—հրամանատարն ու
զինվորական կոմիտարը—մարտի պետք է տանեն նախը, մի-
ավորումը: Իրենց զործին նվիրված հարյուրավոր հրամա-
նատարների համառ աշխատանքը, կոմիտարների կողմից
բարդ մարտական տեխնիկային տիրապետելը, մարտիկների
մեջ նախաձեռնություն, կամք, մարքս-լենինյան գիտակցա-
կանություն ու մարտունակություն դաստիարակելու ուղ-
ղությունը տարած նրանց հմուտ աշխատանքը, կուսակցա-
կան կազմակերպությունների ու կոմսոմոլի ակտիվ աշխա-
տանքը, այս ամենն որ—ավուր ամբացնում են Ռազմա-Մո-
վսիսյան Նավատորմի մարտական հզորութունը:

Նավատորմում աճել են մարտական ու քաղաքական պատ-
րաստութան հարյուրավոր ու հազարավոր գերազանցիկներ,
ակնաավոր մարդիկ, վորոնց ճանաչում է վողջ Ռազմա-Մո-
վսիսյան Նավատորմը: Նրանցից չատերը՝ կառավարական հա-
տուկ առաջադրանքների կատարման և մարտական ու քա-
ղաքական պատրաստութան մեջ ձեռք բերած գերազանց
նվաճումների համար պարգևատրված են Խորհրդային Միու-
թյան շքանշաններով ու մեդալներով:

Ռազմա-Մովսիսյան Նավատորմն ունի այնպիսի ականա-
վոր հրամանատարներ, ինչպես Խորհրդային Միության հե-

բոս, 2-րդ կարգի կապիտան ընկ. Բուրմիստրովը, Խորհրդ-
դային Միության Հերոս, 2-րդ կարգի կապիտան ընկ. Յեզիպ-
կոն: Ընկ. Սելեզնյովը, Բերդնիկովը և ուրիշները, լինելով
ԽՍՀ Միության Գերազույն Խորհրդի ղեկավարներ, Ռազ-
մա-Մովսիսյան Նավատորմում բարդ մարտական ծառայու-
թյունը գերազանց տանելու հետ միասին, հսկայական աշ-
խատանք են տանում ժողովրդի մեջ, վորպես իշխանության
բարձրագույն որդանի ներկայացուցիչներ:

Անատոլի Սելեզնյովը 1935 թ. սուզանավով նավարկում
էր, վորպես շտուրման երեկտրիկ: Նա անցել էր լարված ու-
սուցման ամիսներ: Կամքի ուժն ու գիտելիքների ծարավը
ընկ. Սելեզնյովին հնարավորութուն տվին կարճ ժամանա-
կամիջոցում կատարելապես տիրապետելու երեկտրոնավա-
զնացութան գործիքներ կառավարելու բարդ տեխնիկային,
զառնալու փորձառու ստորջրավար: Միաժամանակ ընկ.
Սելեզնյովը խորը ուսումնասիրում է մարքս-լենինյան թեո-
րիան: 1934 թվից նա Լենինյան կոմսոմոլի անդամ է: Մար-
տական բարդ առաջադրանքների գերազանց կատարման հա-
մար, մարտական ու քաղաքական պատրաստութան մեջ
ձեռք բերած հաջողությունների համար 1935 թ. ձմեռն ընկ.
Սելեզնյովը պարգևատրվեց Խորհրդային Միության բարձ-
րագույն պարգևով—Լենինի շքանշանով:

Նշված նպատակին հասնելու մեջ ցուցաբերած բացառիկ
հաստատակամությունը, արտասովոր ընդունակություննե-
րը, անբասիր ազնվությունն ու նվիրվածությունը Լենինի-
Ստալինի զործին, անսահման համարձակությունն ու հնա-
րագիտությունը շքանշանակիր Սելեզնյովին առաջ մղեցին
Բալթիական նավատորմի գերազանցիկների առաջին շարքե-
րը: Պատահական չէ, վոր իշխանության բարձրագույն որ-
դանի ընտրությունների ժամանակ Անատոլի Սելեզնյովը
ընտրվեց ԽՍՀ Գերազույն Խորհրդի ղեկավարատ:

Ընկ. Բրատուս Ֆյոդոր Խարլամպիեվիչը—կարմիր-նա-
վատորմային, կուրսանտ, ավիատղակի տեխնիկ, այնուհե-
տև՝ քաղաշխատող: Գտնվելով գինկոմի պատասխանատու
աշխատանքում, նա նույնպիսի հաջողություններ է գլուխ հա-
նում իր պարտականություններից, ինչպես գլուխ էր հանել

Պատան լծի շրջանում, ուր նրա ետևադրելիքան փայլուն կերպով շախմատից յայտնական սամուրայներին:

Ձինվորական կոմիսար ընկ. Սուրբուրովը զորամասերում կուսակցական-քաղաքակրթական աշխատանքի լավագույն կազմակերպման հետ միասին կատարելագույն տիրապետեց ծովային տեխնիկային և ցանկացած պայմաններում կարող է նավեր ղեկավարել:

Ո զորամասի հրամանատար ընկ. Կարտաշևիլը և քաղպեկ ընկ. Չերենիկոն նույնպես հաջողությամբ տիրապետում են մարտական բարդ տեխնիկային, խորապես ուսումնասիրում են մարքս-լենինյան թեորիան: Նրանք սերտորեն կապված են կարմիր-նավատորմայինների հետ, ոգնում են նրանց տիրապետելու մարտական բարդ տեխնիկային, մարքս-լենինյան թեորիային, լայնորեն պրոպագանդա յեն անում կուսակցության XVIII համագումարի վերոշումները: Այն զորամասում, վերի հրամանատարն են նրանք, էլի կան անխնայ մարդիկ:

Կրտսեր հրամանատար կոմունիստ ընկ. Միխայլին գերազանց կերպով տիրապետեց թնդանոթի բոլոր գործիքներին ու մեխանիզմներին, ճշգրտորեն վերոշում է իր առջև դրված մարտական խնդիրները, իր ձեռքն է պահում զորամասի փոխանցիկ դրոշմը, իսկ զորամասն ամբողջությամբ պահում է անախուսթյունը միավորման մեջ՝ մարտական ու քաղաքական աշխատանքի բոլոր տեսակները մեջ:

Մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկները, զինվորական ծովագնացների բոլոր կադրերը խորհրդային մեծ ժողովրդի հետ միասին կառուցում են ծովային ու ուղիղանոսային հզոր նավատորմ:

Մարտական ուսուցման աշխատանքի սովորական որերը բնորոշվում են այսպիսի փաստերով:

Գիշեր է, մրրիկ: Սուզանավը Բարենցի ծովի հյուսիսային լայնությունների մեջ է: Հրամանատարական կամրջակի վրա բազրիքներին կապված է ղեկակալ Ուրինցովը: Նավակը հաճախակի ծածկվում է ալիքով:

Հերթական ալիքը մոնչյունով ընկավ նավակի վրա, պոկեց սասներկու գամամուրճերով պահվող յերկաթյա նավատանդուղքը, կախոցից թուցրեց փայտի նման պնզացած

փրկագոտին (спасательный круг): Փրկագոտին սլաց և հարվածեց ղեկակալ Ուրինցովի գլխին: Ղեկակալը բնազդաբնե ցնցեց գլուխը, բայց ձեռքը ղեկածողից չպոկեց: Նախն առաջվա պես լողում էր առաջադրված ընթացքով:

Յերբ հերթափոխվեց, Ուրինցովն անոգա ընկավ և կորցրեց գիտակցությունը: Մակայն նա շուտով ուշքի յեկավ և սահմանված ժամանակին նա պահանջություն յեկավ և ղեկը իր ձեռքը վերցրեց:

Կամ վերցնենք մի այլ որինակ:

Յերեքորյա իննը բալանոց մրրիկից հետո սուզանավը բազան էր վերադառնում: Գիշերը Խերսոնեսի փարոսի միջաթմբի առաջ ղեկը լուվեց: Վթարանքը վերացնելու ուղարկեցին ավազին-ելեկտրիկ Բերնզոլցին և ազգանշանորդ Տուրկմենովին: Տախտակամածի վրա ալիքը նրանց ծածկեց և Բերնզոլցին ծովը քշեց: Տուրկմենովին իրեն չկորցրեց: Նա տախտակամածի յեզրից ծով նետվեց ու ընկերոջն ոգնություն ցույց տվեց: Նրանք յերկուսով շտկեցին ղեկը և հրամանատարին ղեկուցեցին հրամանի կատարման մասին:

Խորհուրդների յերկրի Թագմա-Մովային նավատորմը առանձնահատուկ նավատորմ է, աշխարհում նրան հավասարը չկա, վերովհետև նա ստեղծված է ազատագրման համար մղած պայքարում իր թշնամիներին առաջինը հաղթանակած ժողովրդի կողմից: Ընկեր Ստալինի ցուցումները կարմիր Բանակի առանձնահատուկ յունների մասին ամբողջովին վերաբերում են նաև նավատորմին:

«Մեր կարմիր Բանակի առաջին և հիմնական առանձնահատուկ յունը կայանում է նրանում, վոր նա ազատագրված բանվորների ու գյուղացիների բանակն է, նա Հոկտեմբերյան հեղափոխության բանակն է, պրոլետարիատի դիկտատուրայի բանակը...»

Մեր կարմիր Բանակի յերկրորդ առանձնահատուկ յունը կայանում է նրանում, վոր նա, մեր բանակը, հանդիսանում է վորպես մեր յերկրի ժողովուրդների միջև յեղող յեղբայրության բանակ, վորպես մեր յերկրի ճնշված ժողովուրդների ազատագրման բանակ, վորպես մեր յերկրի ժողովուրդների ազատության ու անկախության պաշտպանության բանակ...

Վերջապես, Կարմիր Բանակը յերջրդ առանձնահատկութիւնը: Այդ առանձնահատկութիւնը կայանում է մեր սմբողջ Կարմիր Բանակը թափանցող ինտերնացիոնալիզմի վրդու մեջ, ինտերնացիոնալիզմի զգացումները մեջ»:

Այդ առանձնահատկութիւնները բնութագրում են է. մեր Ռազմա-Մովային Նախատորմը:

Կարմիր Նախատորմի կոմունիստական դաստիարակութեան և մարտունակութեան ամբողջական գործում վիթխարի սգնութիւնն ցույց տվին «Համամիութենական Կոմունիստական (բոլշեիկներ) Կուսակցութեան պատմութեան համառոտ դասընթացը», կուսակցութեան XVIII համագումարի աշխատանքն ու վորոշումները, վորոնք հանդիսանում են նախատորմի կազմերի կոմունիստական դաստիարակութեան հիմքը: Նախատորմի տասնյակ-հազարավոր կուսակցական և անկուսակցական բոլշեիկներ ուսումնասիրում են «Համամիութենական Կոմունիստական (բոլշեիկներ) կուսակցութեան պատմութեան համառոտ դասընթացը», կուսակցութեան ու կառավարութեան ղեկավարների ճատերը և կուսակցութեան XVIII համագումարի վորոշումները: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները—Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատութիւնները պահանջը վերջին ժամանակներս աճել է չորս անգամ:

Ռազմա-Մովային Նախատորմի կուսակցական կազմակերպութիւնները դարձել են հզոր ուժ: 1938 թ. ՀամԿ(Բ)Կ թեկնածու յեն ընդունվել 15 անգամ ավելի մարդ, քան ընդունված էին անցած 14 ամսվա ընթացքում: 1939 թ. ընթացքում կուսակցական կազմակերպութիւնների աճումը նախատորմում նույնպիսի տեմպերով է կատարվում:

Կուսակցութեան մեջ են դալիս նախատորմի անվանի մարզիկ, մարտական ու քաղաքական պատրաստութեան դերազանցիկները: Գոյի կուսակցութիւնը նպաստում է նախապես մեծ է մեր նախատորմային ինտելիգենցիայի կողմից: Նախատորմի հրամանատարների թվից կուսակցութեան մեջ թեկնածու յեն ընդունված 24 անգամ ավելի մարդ, քան ընդունված էին 1937 թ.:

Անճանաչելիորեն աճել է Ռազմա-Մովային Նախատորմի կոմսոմոլը: Կոմսոմոլիստները կազմում են նախատորմի

անձնակազմի կեսը: Կոմսոմոլի կազմակերպութիւնը 1938 թվի ընթացքում յեռապատկեց իր շարքերը: Ավիտորամասերում քաղղեիկների տեղակայների և կոմիսարների ոգնականների և կոմսոմոլի գծով քաղորդանքների պետերի ոգնականների պաշտոններ սահմանելու մասին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի վորոշումն էլ ավելի ամբարցեց կոմսոմոլի կազմակերպութիւնների դերը նախատորմում:

Մարտական վարժութիւնները, մարտանաւերի ծովային ու ովիկանոսային խմբական նախարկութիւնները, ծովային հրաձգութիւնները ցույց տվին, վոր մասսայական քանակով նախատորմ մտած կատարելագործված մարտական տեխնիկական գտնվում է ամուր ձեռքերում, փորձառու մասնագետներին, իրենց սոցիալիստական հայրենիքի իսկական հայրենասերներին ձեռքերում: Ռազմա-Մովային Նախատորմն աճել-դարձել է ահեղ ու հզոր մի ուժ:

Վերջին ժամանակներս կուսակցութիւնն ու կառավարութիւնը ընկեր Ստալինի նախաձեռնութեամբ մի շարք կարևորագույն միջոցներ ձեռնարկեցին մեր սոցիալիստական պետութեան պաշտպանութեան, կազմերի ամբողջական և Ռազմա-Մովային Նախատորմի մարտունակութեան հետագա վերելքի ուղղութեամբ:

Պաշտպանութեանը 40 միլիարդ 885 միլիոն ուր. հատկացնելը, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Մովային Նախատորմի իսկական ծառայութեան ժամկետների մասին ԽՍՀ Միութեան Գերագույն Սորհրդի հրամանագիրը խնդութեամբ դիմալորեց խորհրդային ժողովուրդը: Ռազմա-Մովային Նախատորմի կուսակցական ու անկուսակցական բոլշեիկներն այդ բերկրանքն արտահայտեցին մարտական ու քաղաքական պատրաստութեան բարձրացումով, գերակեանիկ ծառայութեան մեղա մասին մասսայական դիմումներ տալով:

Նախատորմի ծառայութիւն կատարելու առաջ գոյութիւն ունեցող կարգը չէր բավարարում լավ մասնագետներ ունենալու նրա աճող պահանջներին: Նախատորմի համալրումը արդի նոր մարտական միջոցներով, նոր նաւերով, կատարելագործված մարտական տեխնիկայով, բարդ գործիքներով ու մեխանիզմներով պահանջում է գործի վար-

պետներ—կատարելագործութեան չափ մարզված մասնա-
գետներ:

Այդ խնդրի հաջող լուծման համար հարկավոր է նախա-
տորմում ունենալ լավ հանրակրթական նախապատրաստու-
թյուն և ծառայութեան ավելի յերկարատե ժամկետ, քան
այդ կար մինչև այժմ: Ուստի նախատորմում առաջ գոյու-
թյուն ունեցած ժամկետները փոխվեցին: ԽՍՀ Միութեան
Գերագույն Խորհրդի հրամանագրով Բանվորա-Պուլայացիա-
կան Ռազմա-Մովային Նախատորմում սահմանված են ան-
ընդհատ (ժամկետային) ծառայութեան հետևյալ ժամկետնե-
րը՝ նախերի ու նախատորմի պրամասների զինվորական ծա-
ռայողների համար—5 տարի, առափնյա պաշտպանութեան
զինվորական ծառայողների համար—4 տարի: Գերակետիկ
ծառայութեան թողնելը կատարվում է վոչ պակաս քան 3
տարով: Միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող
անձերի՝ ծառայութեան ժամկետների վերաբերյալ արտու-
նությունները վերանում են: Այդ անձերը պետք է նախա-
տորմում ծառայությունը կատարեն ընդհանուր հիմունքնե-
րով: Հրամանագրում պարզ ձևակերպված է, վոր համապե-
տական այդպիսի կարևոր ձեռնարկումը անհրաժեշտ է
«բաժնորս-գյուղացիական ռազմա-ծովային նավատորմի մար-
տական պատրաստության բարձրացման, անխնայի լավագույն
օրհասակների յնվ բարձրակ մասնագետ կառավար-նավասար-
մայիններ պատրաստելու համար...»:

Այժմ լիակատար հնարավորություն կա նախատորմի
ամբողջ անձնակազմը փոխարկելու հմուտ, բարձրորակ
մասնագետների:

Պատասխանատու ու պատվավոր է գերակետիկների դե-
րը: Նրանք Ռազմա-Մովային Նախատորմի վոսկե Փոնդն են:
Նրանցից յուրաքանչյուրը կուտակել է մարտանավերի ու
ռազմա-ծովային սպառազինման գործիքների ու մեխանիզմ-
ների կառավարման, գործադրման ու խնայութեան ամենա-
հարուստ պրակտիկ փորձ: Խոշորագույն նվաճում է հսն-
դիսանում գերակետիկ ծառայութեան համար հավաքագրելու
պլանի կատարումը: Այդ խնդրի արագ ու համեմատաբար
հեշտ լուծումը ապահովված է կուտակցութեան ու խորհրդ-

դային իշխանութեան ձեռնարկումներով, վորոնք արմատա-
պես բարելավում են գերակետիկ ծառայութեան մեջ գոյություն
հրամանատարների և նախատորմի վորջ անձնակազմի նյու-
թական ու կենցաղային պայմանները:

Խորհրդային ժողովուրդը սիրում է ծովը, սիրում է
յուր ծովային նախատորմը: Մենք առաջին փոշոր հանդուր-
թյուններն ունեցանք նախատորմի շինարարութեան գործում:
Տասնյակ նոր մարտանավեր շարք են մտել և պատրաստ են
ցանկացած ըրպեյին իրենց կրակի վորջ հզորությունը թա-
փել այն թշնամու վրա, վորը կհանդգնի վրանձգություն ա-
նել սոցիալիստական հզոր տերութեան սրբազան ու անձեռն-
մխելի սահմանների վրա:

Մենք պայքարում ենք խաղաղութեան համար, բայց յեթե
Փաշիստական ագրեսորներն ու նրանց գործակիցները Խոր-
հրդային Միութեան վզին պատերազմ փաթաթեն, խորհրդ-
դային ժողովուրդը, վոր ուժեղ է իր բարոյա-քաղաքական
միասնութեամբ, կենինի—Ստալինի անպարտելի կրթակիցու-
թեան շուրջը ունեցած իր համախմբվածութեամբ, պատրաստ
է զինված ուժերի վորջ հզորութեամբ պատասխանելու վորջ
միայն ցամաքում, այլև, ծովի վրա: Խորհրդային ժողովուր-
դը դիմեւ վոր քանի գոյութեան, ունի կապիտալիստական
չըջպատումը, գոյութեան վրանձգութեան կապիտալիստական
յերկրների, սոցիալիստական պետութեան զինվոր հարձակում
գործելու վտանգը:

Մեր Կարմիր Նախատորմը, մեր կարմիր Բանակն իրենց
կռիվագրիայով ինանքնուցիտնալ են: Եւ պատրաստ են թշնամի-
ների հարձակման խորհրդային հզոր նախատորմը Կարմիր
Բանակի հետ միասին պատրաստ է մարդկութեան պատմու-
թեան իմացած ըրոր պատերազմներից ամենաարագ արա-
տագրական պատերազմում ոգնելու ագրեսորների յերկրների
բանվորներին, վոր ազատագրվեն Փաշիդի լծից:

Ռազմա-Մովային Նախատորմի որը բանվոր դասակար-
գը, խորհրդային գյուղացիությունը, սոցիալիստական ին-
տելիգենցիան, կենինյան բազմամիլիոն կոմսոմոլը և խոր-
հրդային ժողովրդի պաշտպանական կազմակերպություննե-
րը՝ Պաշ-Սվիաթիմն ու Ոսվոդը (Ջրային արանսպորտին
Աջակցող Ընկերությունը) հանրագումարի յեն բերում ԽՍՀՄ

30
11

ծովային ու ովկիանոսային նավատորմի շինարարութեան
ուղղութեամբ կատարված աշխատանքի արդյունքները: Շատ
բան է արված, բայց դեռ շատ բան կա անելու: Անհրաժեշտ
է ելլ ավելի լավ հիմքերի վրա դնել ռազմա-ծովային
պաշտպանական աշխատանքը: Փարբիկաներում, դործարան-
ներում, կոլտնտեսութուններում, խորհրդային հիմնարկնե-
րում պետք է պատրաստվեն ծովային դործին ծանոթ ու
ծովը սիրող քաջարի պատանի ծովազնացիների կադրեր:
Ռազմա-ծովային խմբակներում, սպորտային ընկերութուն-
ներում տասնյակ ու հարյուր-հազարավոր խորհրդային յե-
րիտասարդ մարդիկ պետք է ստանան անհրաժեշտ ծովային
դիտելիքներ, հմտութուն, ծովային կոմիւնիստներ և սովորե-
մեր հայրենիքի նավատորմի պատմութիւնը, նրա հերոսա-
կան հեղափոխական-մարտական արդիւցիւնները:

Այդ խնդիրների հաջող կատարումը շատ բանով կախ-
ված է ծովային նավատորմի շեֆի՝ կարմրադրոշ Լենինյան
կոմսոմոլի աշխատանքից: Շատ բան կարող է ու պետք է
անի կարմիր նավատորմի ամբաստանաւոր համար ջրային
սրանսպորտը:

Ստալինյան յերրորդ հնգամյակը ծովային ու ովկիանո-
սային հզոր նավատորմի շինարարութեան հնգամյակ է:

Պորհրդային ժողովուրդը, միասնական ու համախումբ-
ված, բոլշևիկների կուսակցութեան ղեկավարութեամբ, մեծ
Ստալինի ղեկավարութեամբ հաջողութեամբ կկատարի նաև
այս պատմական խնդիրը—սոցիալիզմի առաջին և աշխար-
հում առայժմ միակ ծովային ու ովկիանոսային հզոր նա-
վատորմի շինարարութեան խնդիրը:



ԳԻՆԸ 30 Կ.

11

28769

А. ШУБИН И К. ДОБРОЛЮБОВ
ВОЕННО-МОРСКОЙ
ФЛОТ СССР

Аригиз—Издательство полит. литературы
Ереван ● 1939